# ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՂԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ

***Հետազոտության զեկույց***

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

***Ներածություն*** .....3

**Մաս 1.** Մարդու իրավունքների ու ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շուրջ ապատեղեկատվությունն ու պրոպագանդան.....8

**Թեմա 1.1** Եզդիները Հայաստանում. մարտահրավերները մեդիայի և իրավունքի տիրույթում.....8

**Թեմա 1.2** Մարդու իրավունքների կոնտեքստի երկրորդայնացումն ու դրան առնչվող ապատեղեկատվությունը.....14

**Թեմա 1.3** Համայնքային առաջնորդի միֆը որպես իրավունքների վիճակի մասին ապատեղեկատվության տարածման գործիք.....22

**Թեմա 1.4** Ազգային փոքրամասնությունների իրավունքների և իրավապաշտպանների վերաբերյալ պրոպագանդան և ապատեղեկատվությունը. Սաշիկ Սուլթանյանի գործը.....26

**Մաս 2.** Սոցիալ-մշակութային, կենցաղ-զբաղմունքային կարծրատիպերը և հիմնական տարածված սխալները Հայկական մեդիայում.....42

**Թեմա 2.1** Սոցիալական կարծրատիպերի ստեղծումն ու տարածումը լրատվամիջոցներով.....44

**Թեմա 2.2** Մշակութային, կրոնական և կենցաղ-զբաղմունքային կյանքի մասին միֆերի ստեղծումն ու տարածումը լրատվամիջոցներով.....61

**Առաջարկություններ**.....80

**Խորհուրդներ լրագրողներին և լրատվամիջոցներին**.....83

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ապատեղեկատվության ստեղծումն ու տարածումը մեծ մարտահրավեր է ժամանակակից աշխարհում, քանի որ վերջինս խոչընդոտում է հասարակությանը ծանոթանալ փաստերին այնպիսին, ինչպիսին որ դրանք կան, և ձևավորել իրականության զգացողությանը համապատասխանող վարքագիծ: Այս խնդիրն ավելի արդիական է դառնում, երբ խոսքը վերաբերվում է ազգային փոքրամասնություններին, քանի որ վերջիններս լինելով ավելի խոցելի դիրքում, առավել անմիջականորեն են կրում աջական խմբերի գործողությունների հետևանքները:

Սույն զեկույցի միջոցով փորձ է արվում ևս մեկ անգամ կարևորել այն միջազգային փաստաթղթերում մատնանշված պարտավորությունները, որոնք Հայաստանը հանձն է առել ազգային փոքրամասնությունների պաշտպանության նպատակով և դրա լույսի տակ՝ որպես ուղենիշային փաստաթղթեր, ցույց տալ այն հիմնական ապատեղեկատվության տեսակները, որոնք՝

- խոչընդոտ են հանդիսանում ազգային փոքրամասնությունների քաղաքացիական և քաղաքական մասնակցության համար,
- արգելակում են վերջիններիս շրջանում իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունը,
- ստեղծում են վերջիններիս մասին կարծրատիպեր՝ նպաստելով նրանց նկատմամբ խտրականությանը և խարանին:

Չնայած զեկույցը վերաբերվում է ազգային փոքրամասնություններին վերաբերվող ապատեղեկատվական հոսքերին և ուսումնասիրում է ոլորտային ունիվերսալ

փաստաթղթերն ու մեխանիզմները, սակայն այն որպես թիրախային խումբ է վերցրել Հայաստանի եզդիական համայնքը, որը հանդիսանում է Հայաստանի ամենամեծ ազգային փոքրամասնությունը: Իհարկե յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն ունիկալ դիրք ունի հասարակությունում՝ կախված իր ծագումից, քաղաքական միջավայրից և Հայաստանում հայտնվելու նախապատ-մությունից, սակայն, այնուամենայնիվ եզդիական համայնքի ընտրությունը կարևոր է նաև այն առումով, որ վերջինս հանդիսանում է և՛ էթնիկ, և՛ կրոնական, և՛ լեզվական փոքրամասնություն: Եզդիական փոքրամասնության համայնքի ամենամեծը լինելը, ըստ էության, հնարավորություն է տալիս նաև ընդհանուր պատկերացում կազմել ազգային փոքրամասնությունների մեդիա պատկերի և ոլորտում առկա խնդիրների մասին:

Զեկույցը հիմնված է կատարված հետազոտության վրա: Հետազոտության ընթացքում օգտագործվել է մամուլի մոնիթորինգի, վերլուծության և միջազգային ոլորտային փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդը: Մամուլի մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են պետական Արմենպրես, Հանրային Հեռուստատեսություն, Հանրային Ռադիո լրատվամիջոցները, ՀՀ կառավարության, ՀՀ Վարչապետի, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքերը, հայկական թվային մեդիան և հեռուստաընկերությունները, որոնցից հղումներ կկատարվեն յուրաքանչյուր դեպքը ներկայացնելիս: Հարկ ենք համարում ընդգծել, որ զեկույցում հիշատակվող տարբեր լրատվամիջոցների հրապարակումներին հղումներ կատարելը նպատակ չի հետապնդում թիրախավորել կամ վարկաբեկել գործընկեր լրագրողական համայնքին կամ

առանձին լրագրողներին, այլ արվել է ազգային փոքրամասնությունների ամենատարբեր հարցերի շուրջ հրապարակումներում խնդիրները վեր հանելու և այդ համայնքների մասին լուսաբանումներում առավել զգայուն և արհեստավարժ մոտեցում ցուցաբերելու նկատառումներով:

Հետազոտության զեկույցը բաղկացած է երկու հիմնական մասերից և առաջարկությունների ու խորհուրդների բաժիններից: Առաջին մասում կներկայացվեն Հայաստանում եզդիական համայնքի իրավական կարգավիճակը և մարտահրավերները, ապա ըստ ոլորտների՝ անդրադարձ կկատարվի մարդու իրավունքների ոլորտի երկրորդայնացմանը, հասարակական-քաղաքական արդյունավետ և իմաստալից մասնակցությանը խոչընդոտող միֆերին: Առաջին մասը հեղինակել է «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» ղեկավար, ազգային փոքրամասնությունների իրավունքների փորձագետ Մուրազ Շամոյանը:

Հետազոտության երկրորդ մասում անդրադարձ կկատարվի եզդիական համայնքի մասին սոցիալ-մշակութային, կենցաղ-զբաղմունքային միֆերին և մեդիայում տարածված հիմնական սխալներին, որոնք հիմք են հանդիսանում անհանդուրժողականության ստեղծման համար և խանգարում միջմշակութային առողջ երկխոսությանը: Այս հատվածում ուսումնասիրվել են վերջին տարիներին հայկական մեդիա տիրույթի այն տեքստային և վիդեո նյութերը, որոնք եզդիների կերպարը սխալ ներկայացնելով՝ ապատեղեկատվություն են տարածում նրանց մասին: Առանձնակի ուշադրության են արժանացել հատկապես այն դեպքերը, որոնք դառնալով համակարգային, դարձել են

բացասական կարծրատիպեր ստեղծող և եզդիների մասին ապատեղեկատվություն տարածելով՝ փոխել են վերջիններիս մասին հասարակական ընկալումներն ու կարծիքը: Երկրորդ մասը հեղինակել է եզդիական «Խիրատ Մեդիա» լրատվականի լրագրող, հետազոտող Շուշանե Սաքունցը:

Հետազոտության ավարտին կներկայացվեն առաջարկներ և խորհուրդներ՝ ըստ հասցեատերերի:

Սույն զեկույցը պատրաստվել է **«Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի»** կողմից իրականացվող **«Հակազդելով ազգային փոքրամասնությունների մասին ապատեղեկատվությանն ու կեղծ տեղեկատվությանը»** ծրագրի շրջանակներում՝ «**Freedom House**» միջազգային իրավապաշտպան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի մեջ արտահայտված մտքերը և զեկույցի հեղինակային իրավունքները պատկանում են հեղինակներին և «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնին» և կարող են չհամընկնել «Freedom House»-ի տեսակետներին:

# ՄԱՍ 1

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏ-ՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

## Թեմա 1.1 Եզդիները Հայաստանում. մարտահրավերները մեդիայի և իրավունքի տիրույթում

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ **Հայաստանում բնակվում է 35272 եզդի**[1]: Եզդիները Հայաստանի 3-րդ հանրապետության հիմնադրման գործում մասնակցություն ունեցած էթնիկ խմբերից են, որոնք Հայաստանում են հայտնվել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ Օսմանյան կայսրությունում անհանդուրժողականության և կրոնական հիմքի վրա սկսված հալածանքների պատճառով:

Հայաստանի եզդիները իրենց լեզուն անվանում են **«Էզդիկի»**[2], որը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղին: Այս լեզուն գիտական գրականության մեջ առավել հայտնի է նաև որպես քրդերեն լեզվի կուրմանջի բարբառ: Եզդիների կրոնը գիտական գրականության մեջ անվանվում է Եզդիականություն կամ

[1]Սույն թվաքանակը արձանագրված է 2011թ. անցկացված մարդահամարի տվյալներով: 2022թ. իրականացված մարդահամարի արդյունքները հետազոտության իրականացման ժամանակահատվածում դեռևս չէին ամփոփվել

[2] Ձեռնարկ Հայաստանի եզդիաբնակ համայնքներում ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համար. մշակույթ, իրավունք, օրենսդրություն, «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն», 2020 թ., էջ 8-10

Եզիդիզմ, որը հայաստանաբնակ եզդիներն անվանում են **«Շարֆադին» կամ «Շարֆադինի» կրոն**[3]:

Հայաստանի անկախացումից հետո Հայաստանը անդամակցեց «ՄԱԿ»-ին՝ դրանով ընդունելով Գլխավոր ասամբլեայի հռչակագրերը, որոնց թվում են հետազոտության համար հետաքրքրություն ներկայացնող հետևյալ փաստաթղթերը՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը[4],
- «ՄԱԿ»-ի հռչակագիրը ազգային, կրոնական, լեզվական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին[5],
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը[6]:

Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերվող կարևոր փաստաթղթերից են նաև՝

- Եվրոպայի խորհրդի **Շրջանակային կոնվենցիան** ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին[7]

---

[3] Նույն տեղում

[4] https://www.ohchr.org Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

[5] https://www.ohchr.org «ՄԱԿ»-ի հռչակագիրը ազգային , կրոնական լեզվական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին

[6] https://www.arlis.am Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

[7] rm.coe.int Framework Convention for the Protection of National Minorities

- Եվրոպայի խորհրդի **Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիան**[8]
- Լինելով ԵԱՀԿ անդամ պետություն, Հայաստանի համար խորհրդատվական նշանակություն ունեն ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով հանձնակատարի գրասենյակի հրապարակած ուղեցույցները, ընդ որում՝ հետազոտության համար հատկապես հետաքրքրություն է ներկայացնում **«Թվային դարաշրջանում ազգային փոքրամասնությունների և մեդիայի վերաբերյալ Տալլինի ուղեցույցի և բացատրական նշումների զեկույցը»** (այսուհետ՝ Տալլինի առաջարկներ) զեկույցը[9]:

**Իրավական գործիքակազմը** ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ «խտրականությունը պայմանավորված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Սահմանադրության նշված հոդվածը ենթադրում է, որ պետության ներսում պետք է ստեղծված լինի այնպիսի միջավայր, որը կապահովի հավասար հնարավորություններ

---

[8] rm.coe.int/Charter European Charter for regional or minority languages

[9] https://www.osce.org The Tallinn Guidelines on National Minorities and the Media in the Digital Age & Explanatory Note, February 2019

երկրում բնակվող յուրաքանչյուր խմբի համար՝ հավասարապես ստանալ կրթություն, օգտվել իր իրավունքներից և ազատություններից: Ազգային փոքրամասնությունների համար հավասար հնարավորությունների ստեղծման նպատակով պետությունն ունի պոզիտիվ պարտավորություններ[10], որը նշանակում է, որ պետք է ստեղծվեն հավելյալ մեխանիզմներ ունիվերսալ նորմերն ազգային փոքրամասնությունների համար կիրառելի դարձնելու նպատակով: Վերոգրյալի առնչությամբ ՀՀ կողմից վավերացված Ազգային փոքրամասնությունների մասին Շրջանակային կոնվենցիայում[11] ամրագրված է.

«*Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով Կողմերը, ըստ հավուր պատշաճի, պետք է ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար համապատասխան պայմաններ և գործիքակազմ*»:

Սա ենթադրում է հավելյալ այնպիսի մեխանիզմների ստեղծում, որոնք կերաշխավորեն՝

---

[10] Vol. 10, No. 4 (2004) Educational Rights of Persons Belonging to National Minorities, DUNCAN WILSON, International Journal on Minority and Group Rights

[11] https://www.arlis.am Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիա, հոդված 4, կետ 2

- Ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի, լեզվի զարգացման, արտահայտման ազատության համար բարենպաստ պայմանների ստեղծում
- Խտրականության բացառում և այնպիսի պայմանների ստեղծում, որը չի խրախուսի խտրականությունը
- Հնարավորություններ ազգային փոքրամասնու-թյուններին՝ ծանոթանալ իրենց իրավունքներին և մասնակցել դրանց պաշտպանությանը
- Հնարավորություններ՝ արդյունավետ և իմաստալից կերպով մասնակցել երկրի քաղաքական, հասարա-կական կյանքի բոլոր գործընթացներին, հատկապես դրանց, որոնք ուղակի կերպով ազդում են վերջիններիս կյանքի որակի վրա:

**Պետության կողմից նման պարտավորությունների իրականացման համար մեծ մարտահրավեր են ապատեղեկատվությունը և պրոպագանդան, որի հիմնական թեզերի շուրջ կխոսենք այս զեկույցում:**

Եթե ապատեղեկատվության դեպքում այն կարող է առաջանալ տեղեկատվության պակասի և պետության կողմից իր իրազեկման պարտականության չկատարման հետևանքով և հաճախ ստեղծվել, տարածվել նաև ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ, ապա պրոպա-գանդայի պարագայում գործ ունենք հատուկ խմբերի կամ կառույցների հետ, որոնք ապատեղեկատվության և հստակ կեղծ թեզերի տարածման միջոցով հետապնդում են կոնկրետ նպատակ և գործում են պլանավորված և տեղեկատվության

ալիքների նախնական պլանավորմամբ:[12] ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից հրապարակված Տալլինի առաջարկներում[13] ամրագրված է.

«*Պետությունները կամ հանրային դերակատարկները պիտի խուսափեն ցանկացած պրոպագանդայի, ապատեղեկատվության և ապակողմնորոշող դիսկուրսի տարածումից կամ տարածմանը աջակցելուց, որոնք նպատակ ունեն կամ կարող են խարխլել պետությունների միջև բարեկամական հարաբերությունները և/կամ այլ պետությունների ինքնիշխանությունը, խոչընդոտել ինտեգրումը այլ պետություններում և/կամ առաջացնել թշնամանք որոշակի խմբերի, ներառյալ ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Ինտերնետային միջնորդները պետք է պահպանեն մարդու իրավունքների սկզբունքները, հարգեն մարդու իրավունքները առցանց և կամավոր ընդունեն և կիրառեն մարդու իրավունքների և կանանց իրավունքների բոլոր միջազգային գործիքները թվային միջավայրում*»:

[12] https://www.ned.org ISSUE BRIEF: DISTINGUISHING DISINFORMATION FROM PROPAGANDA, MISINFORMATION AND “FAKE NEWS", Dean Jackson, 2017

[13] The Tallinn Guidelines on National Minorities and the Media in the Digital Age & Explanatory Note, February 2019

## Թեմա 1.2 Մարդու իրավունքների կոնտեքստի երկրորդայնացումն ու դրան առնչվող ապատեղեկատվությունը

Պետության մեջ քաղաքացիների հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրության, ներպետական օրենքների և ստորագրված միջազգային փաստաթղթերի միջոցով:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հիմքը վերջիններիս կողմից իրենց իրավունքների իմացությունն է: Այս իրավունքների իմացությունը և դրա մասին իրազեկման բարձրացումը պետք է խրախուսվի պետության կողմից, որպեսզի ազգային փոքրամասնությունները հնարավորություն ունենան պաշտպանել դրանք: Պետության կողմից նման պոզիտիվ պարտավորության իրականացման միջոցով է միայն հնարավոր ապահովել հավասար հնարավորություններ նշված խմբերի համար: Այս պարտավորության իրականացման համար նախևառաջ անհրաժեշտ է, որ ոլորտի համար պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ծանոթ լինեն այդ սկզբունքներին և իրենց գործողությունները կատարեն համապատասխան դրանց՝ այդպիսով խրախուսելով այդ նորմերի տարածումը նաև հանրության լայն շերտերի շրջանում:

Նման նորմերի իմացությունը և պարբերաբար մատնանշումը հնարավորություն կտա ապահովել դրանց տեսանելիությունը և խնդրո առարկա հարցերի քննարկման ժամանակ հնարավորություն կտա հղում անել դրանց՝ այդպիսով

ազգային փոքրամասնությունների հետ հարաբերություն-ները դնելով ինստիտուցիոնալ մակարդակի վրա:

Այս համատեքստում կարևոր է, որ իրավունքահեն մոտեցում որդեգրեն նաև հանրային և մասնավոր լրատվական միջոցները: Սա ոչ միայն կլուծի նման նորմերի մասին իրազեկման հարցը, այլև կընդգծի դրանց կարևորությունը հասարակության շրջանում:

Ըստ Տալլինի առաջարկների՝[14] «*Պետությունները պետք է ներմուծեն օրենսդրություն և (կամ) փոփոխեն գործող օրենսդրությունը՝ երաշխավորելու հանրային ծառայության լրատվամիջոցների անկախությունն ու կայունությունը և թույլ տան նրանց կատարել իրենց մանդատը՝ ծառայելու հասարակության բոլոր շերտերին, ներառյալ ազգային փոքրամասնություններին՝ նրանց տրամադրելով տարբեր բարձրորակ ծրագրեր և ծառայություններ մի շարք տարբեր ոլորտներում: Նման օրենսդրությունը պետք է նախատեսի կամ գոնե դյուրացնի ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը հանրային ծառայու-թյունների տարբեր մակարդակներում, խրախուսի նրանց մասնակցությունը լրատվամիջոցների գործունեությանը, ինչպիսիք են բովանդակության արտադրությունը, խմբագրական որոշումների կայացումը և վերահսկման աշխատանքները*»:

**Մինչդեռ հայաստանյան իրականության մեջ իրավունքակենտրոն մոտեցման փոխարեն հանրային լրատվամիջոցները, պետական գործիչ-ները և պետության հետ առնչություն ունեցող հասարակական և պետական գործիչներն ազգային**

[14] Նույն տեղում

**փոքրամասնությունների, նրանց իրավունքների կամ ընդհանուր վիճակի մասին խոսելիս առաջնորդվում են զգացմունքային և ընդհանրական բնույթ ունեցող գնահատականներով և տերմիններով:**

Մեր կողմից Հանրային Հեռուստաընկերության, «Արմենպրես» լրատվական գործակալության հրապարակումների ուսումնասիրության ընթացքում իրավունքի վերաբերյալ հիշատակումներ չեն հայտնաբերվել: Եզդիների մասին հրապարակումները հիմնականում վերաբերվում են ՀՀ Ազգային Ժողովի եզդի պատգամավորի աշխատանքային այցերին, ՀՀ Վարչապետի աշխատակազմին կից Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի, ՀՀ կառավարության աջակցությունը վայելող «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ի հայտարարություններին և Իրաքում եզդիների ցեղասպանությանն առնչվող հարցերին:

Նշված լրատվամիջոցների կայքերում առկա են նաև հրապարակումներ Վարչապետի, Ազգային Ժողովի նախագահի կողմից շնորհավորանքներ եզդիների Տաուսե Մալաքի (եզդիների ազգային նոր տարի) տոնի առիթով, որտեղ պետական այրերը շնորհավորում են եզդիներին տոնի առթիվ, մաղթում առաջընթաց և հայ-եզդիական հարաբերությունների զարգացում:

Մարդու իրավունքների պաշտպանությունը լինելով անընդհատ գործընթաց, պահանջում է մարդու իրավունքների խախտումների հայտնաբերում, պատասխանատու մարմինների ուշադրությունը խնդրի վրա գրավելու նպատակով դրանց լուսաբանում, խնդրի լուծում և կառավարության և պետական այլ մարմինների կողմից հստակ ազդակների ուղարկում այն մասին, որ իրավունքի

խախտումները՝ անձի կամ խմբի փոքրամասնություն լինելու հանգամանքով, դատապարտելի են: Ընդ որում, գործողությունների այս շղթան չի երաշխավորում, որ այլևս նման իրավախախտումներ չեն լինի, բայց պարտադիր է, որ պետական գործիչների և հանրային մեդիայի մակարդակով անընդհատ խոսվի նման խնդիրների մասին: Նույնիսկ մարդու իրավունքների պաշտպանության բարձր մակարդակով աչքի ընկնող պետություններում խտրականության դեպքերն ու ազգային փոքրամասնության հիմքով այլ խախտումները բացառված չեն և գոյություն ունեն, սակայն հետևողական պայքարի արդյունքում դրանք աստիճանաբար դառնում են անընդունելի հասարակության աչքերում և պետական մարմինների կողմից արժանանում են համապատասխան իրավական գնահատականի:

**Պետական մարմինների ու նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից խնդիրների, այդ թվում խտրականության գոյության ժխտումը նման իրավախախտումները դարձնում են ոչ տեսանելի: Նման իրավախախտումների ի հայտ գալու պարագայում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները խրախուսված չեն խոսել դրանց մասին, և բարձրաձայնման միջոցով լուծումներ փնտրել հանրային տիրույթում:**

Ազգային փոքրամասնությունների խնդիրների գոյության ժխտման օրինակները բազմաթիվ են պետության կողմից ֆինանսավորվող և տնօրինվող մեդիա հարթակներում, սակայն այս հատվածում կներկայացնենք ՀՀ Վարչապետի աշխատակազմից ամենաշատ ֆինանսավորում ստացած, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից եզդիական գրքերի կազմման

և տպագրման համար պատասխանատու, բազմիցս հանրային կերպով տվյալ պահին գործող իշխանություններին եզդիների անունից աջակցություն հայտնող «Եզդիների ազգային միության» ներկայացուցիչ-ների ասուլիսներից մեկը, որը կազմակերպվել է պետական «Արմենպրես» լրատվական գործակալության

**Հայաստանում եզդի ժողովրդի նկատմամբ որևէ խտրականություն չկա. Եզդիների ազգային միության նախագահ»** վերտառությամբ նյութում «Եզդիների ազգային միության» նախագահը նշում է, որ «Այստեղ (նկատի ունի Հայաստանը) մենք կարող ենք ազատ խոսել մեր իրավունքների պաշտպանության, մեր մշակույթի պահպանման ու զարգացման մասին: Եզդի ժողովրդի նկատմամբ որևէ խտրականություն գոյություն չունի: Եզդիական համայնքը Հայաստանում ապրում, զարգանում ու պահպանում է իր ազգային ավանդույթները»:

Մինչդեռ ազգային փոքրամասնությունների իրավունքները մշտադիտարկող «Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների Շրջանակային կոնվենցիայի մոնիթորինգային մարմինը» Հայաստանին վերաբերվող իր 2023 թվականի զեկույցում[15] հիշատակում է բազմաթով իրավունքի խախտումներ, ներառյալ խոսքի ազատ արտահայտումը, խտրականությունը բազմաթիվ ոլորտներում, կրթություն ստանալու և ինքնության պահպանման հետ կապված մի շարք դժվարություններ:

Մոնիթորինգային մարմինը նշում է նաև, որ Հայաստանում ազգային փոքրամասնությունների հանդեպ խտրականության մոնիթորինգի մեխանիզմներ չկան, և պետական մարմինները բավարար ջանքեր չեն գործադրում նշված դեպքերի հայտնաբերման համար:

[15] https://rm.coe.int/5th-op-armenia-en 5-րդ կարծիք Հայաստանի մասին, Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե

մամուլի ակումբում և լույս է տեսել համանուն կայքում:[16]

**Նշվածից հիմնավորված է դառնում այն հանգամանքը, որ խտրականություն ոչ թե չկա, այլ չկան դրանք հայտնաբերելու մեխանիզմներ և դրանց արձագանքելու համար բավարար ջանքեր:**

Նման պայմաններում երևույթի առկայության հանրային կերպով, պետության կամ նրան առնչվող կառույցների կողմից մերժումը և խնդիրների բացառման մասին հետևողական մեդիա նյութերի տարածումը կարող է պատճառ դառնալ պետության կողմից խտրականության զոհերի իրավունքների ոչ բավարար պաշտպանությանը: Պետական լրատվամիջոցները պետք է հարթակ տրամադրեն ոչ միայն խտրականության զոհերին, այլև թեմայի վերաբերյալ մտահոգություններ ունեցող այլ դերակատարներին:

Մինչդեռ ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության և Ազգային ժողովի, Արմենպրես լրատվական գործակալության և ՀՀ հանրային հեռուստաընկերության կայքերում ազգային փոքրամասնությունների մասին տեղեկատվությունը վերաբերվում է միայն Իրաքի եզդիների ցեղասպանությանը, Իրաքում և Թուրքիայում մարդու իրավունքների խախտումներին և ՀՀ-ում ապրող եզդիների կողմից դրանց դատապարտմանը:

---

[16] https://armenpress.am/arm/news Հայաստանում եզդի ժողովրդի նկատմամբ որևէ խտրականություն չկա. Եզդիների ազգային միության նախագահ

Նշված կայքերում առկա տեղեկատվությունը հիշատակում է նաև Իրաքում Հայաստանի Դեսպանության և Իրաքյան Քուրդիստանում Հայաստանի հյուպատոսության կողմից եզդիներին տրվող աջակցության մասին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքում առկա եզդիներին մատնանշող երեք հրապարակումները վերաբերվում են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի կողմից «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» ներկայացուցիչների հետ հանդիպմանը և շնորհավորանք եզդիական «Տաուսե Մալաքի տոնի առիթով»: Մարդու իրավունքների պաշտպանի կայքում առկա մյուս հրապարակումը վերաբերվում է «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» նախկին ղեկավար Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ ՀՀ ԱԱԾ-ի կողմից նախաձեռնված քրեական հետապնդմանը, որտեղ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը միանում է միջազգային կառույցների մտահոգություններին և կոչ անում դադարեցնել քրեական հետապնդումը[17]:

Հետաքրքրական է նաև, որ ի տարբերություն հանրային լրատվամիջոցներում առկա շնորհավորական բնույթի հրապարակումներին, նշված կայքերում առկա չէ որևէ տեղեկատվություն ՀՀ-ում մարդու իրավունքների վիճակի և ազգային փոքրամասնությունների խնդիրների մասին: Նշված կայքերում չկան նաև տեղեկատվական բնույթի նյութեր, որոնք կիրազեկեն ազգային փոքրամասնու-

[17] https://ombuds.am ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կիսում է իրավապաշտպանների և Freedom House կազմակերպության մտահոգությունները Սաշիկ Սուլթանյանի գործով

թյունների իրավունքների մասին: Նշված կայքերում և ՀՀ կառավարության կայքում առկա չէ տեղեկատվություն ՀՀ կառավարությունում առկա ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող ստորաբաժանումների՝ մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերվող գործունեության մասին (զեկույցներ, հայտարարություններ և այլն): ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքը հարմարեցված է տեսողական, լսողական հաշմանդամություն ունեցող անձանց համար: Կայքում առկա են նաև բազմաթիվ մեդիա նյութեր երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին, սակայն ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին որևէ հրապարակման նշված կայքերում չհանդիպեցինք: Պաշտպանի կայքը հասանելի չէ Հայաստանում ապրող 11 ազգային փոքրամասնություններից որևէ մեկի լեզվով:

Հանրային Ռադիոյի և Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակվող եզդիների վերաբերյալ նյութերը Հանրային ռադիոյի ամենօրյա պաշտոնական լրահոսի թարգմանություններն են:

Պաշտոնատար անձանց կողմից ազգային փոքրամասնությունների իրավունքների անընդհատ բարձրաձայնումը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիոնալ պարտականություններ են, որոնք նպատակաուղված են ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկման բարձրացմանը, ինչպես նաև կարևոր ազդակ կարող են ուղարկել պետական ստորադաս մարմիններին, մամուլին և լայն հասարակությանը նրանց իրավունքների կարևորման մասին:

**Պետության կողմից ազգային փոքրամասնու-թյունների իրավունքների մասին չխոսելը մեծ բաց է առաջացնում նրանց խնդիրների բարձրաձայնման, նրանց բարձրացրած հարցերին ընթացք տալու տեսանկյունից: Չունենալով բավարար տեղեկատվություն և պետության կողմից նշված ոլորտի հանդեպ հստակ օրակարգ՝ հանրային գործիչները, լրատվամիջոցներն ու քաղաքական խմբերը մանիպուլացիաների, և ազգային փոքրամասնությունների հարցերը իրենց ձեռնտու կերպով բարձրաձայնելու, ապատեղեկատվության միջոցով հանրային կարծիք ձևավորելու համար մեծ տարածք ունեն:**

## Թեմա 1.3 Համայնքային առաջնորդի միֆը որպես իրավունքների վիճակի մասին ապատեղեկա-տվության տարածման գործիք

Հայաստանի Հանրապետությունում չկա ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղական առանձ-նացված օրենսդրություն: Ազգային փոքրամասնությունների հետ հարաբերությունները կարգավորվում են ներպետական օրենսդրության և ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի հիման վրա:

Նշված փաստաթղթերում երաշխավորվում է ազգային փոքրամասնությունների կողմից միավորումներ ստեղծելու ազատությունը և նշվում է, որ պետությունը պիտի խրախուսի ազգային փոքրամասնությունների անհատ

անդամների և միավորումների մասնակցությունը հանրային դիսկուրսին և հատկապես այն հարցերին, որոնք ուղակի ազդեցություն ունեն ազգային փոքրամասնությունների կյանքի որակի վրա: Ընդ որում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ազատ են լինել նման միավորումների անդամ կամ ոչ:

Այս պարտավորությունը ենթադրում է, որ պետությունը հանրային դիսկուրսի մասնակից դարձնի նրանց բոլորին, ովքեր դրա ցանկությունն ունեն, նույնիսկ նրանց, ովքեր դեմ են արտահայտվում կառավարության կամ պետական այլ մարմինների մոտեցումներին:

Հայաստանում պաշտոնապես գրանցված են եզդիական համայնքային 12 կազմակերպություններ: Նրանք կանոնադրական նպատակներում հիմնականում նշում են մշակութային, կրթական, իրավապաշտպան գործունեությունը: Չնայած առկա տասնյակը գերազանցող կազմակերպություններին, հայաստանյան մեդիայում բազմաթով են **«Եզդիների առաջնորդ»** վերտառությամբ հրապարակումները: Նման անվանարկումներ կատարում են նախևառաջ պետական լրատվամիջոցները՝ հղում անելով այն անձանց, որոնց կազմակերպությունը (կազմակերպությունները) ֆինանսավորում են ստանում պետությունից և սերտ առնչություն ունեն իշխող կուսակցության հետ:

**Մինչդեռ եզդիական համայնքը բաղկացած է շատ ավելի լայն շերտերից և ոչ մի անհատ կամ կազմակերպություն չի միավորում նրանց բոլորին: «Համայնքի առաջնորդ» եզրույթն ինքնին չհամապատասխանելով իրականությանը, շատ հաճախ օգտագործվում է քաղաքական կամ այլ բնույթի ապատեղեկատվությունների տարածման համար և նպատակ ունի պետությանը կամ քաղաքական մի խմբի համար շահեկան հայտարարությունը վերագրել մի ամբողջ խմբի:**

Մամուլում նման հրապարակումները վերաբերվում են հիմնականում «Եզդիների ազգային միությանը», նրա ղեկավարներին և դրան հարակից հոգևոր կազմակերպության ղեկավարներին: Ազատություն ռադիոկայանի կայքում առկա հրապարակումներից մեկում կազմակերպություններից մեկի ղեկավարը, հանդես գալով բոլոր եզդիների անունից, նշում է, որ եզդիական համայնքը ընտրություններում աջակցելու է Սերժ Սարգսյանին[18]:

«Աշխարհի եզդիների ազգային միության» նախագահությունը կոչ է արել Հայաստանի եզդի համայնքին՝ 2008 թվականի նախագահական ընտրություններում պաշտպանել Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Այդ մասին «Ազատություն» ռադիոկայանին ասաց միության նախագահը՝ համոզմունք հայտնելով, որ յուրաքանչյուր երկրում ազգային փոքրամասնությունները պետք է լինեն կառավարության կողքին:

18 https://www.azatutyun.am Հայաստանի եզդիները նախագահական ընտրություններում կպաշտպանեն Սերժ Սարգսյանին

2018թ. քաղաքական փոփոխություններից հետո ևս նշված կազմակերպության կողմից բազմաթիվ են հրապարակումները, որտեղ վերջիններս ներկայանալով որպես եզդիական համայնքի լիդերներ, քաղաքական բնույթի հայտարարություններ են անում:

Հանրային մեդիա դերակատարների և լրատվամիջոցների կողմից նշված տեղեկատվությունը գերազանցապես չի ստուգվում, որի արդյունքում նշված գործիչներն անընդհատ ներկայացվում են իբրև «համայնքի առաջնորդներ»:

Նմանատիպ մեկ այլ աղմկահարույց արշավ էր տեղի ունեցել 2011 թվականին, երբ ՀՀ Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելիս նախատեսվում էր ամուսնության ընդհանուր տարիքը 17-ից փոխել 18 բոլոր սեռերի համար: Մինչդեռ «Եզդիների ազգային միության» կողմից կազմակերպված ասուլիսի ընթացքում կազմակերպության նախագահը կրկին ներկայանալով որպես համայնքի առաջնորդ, հայտարարեց,[19] որ ըստ եզդիական ավանդույթների, իրենց հասարակությունում 18 տարեկան լրացած և չամուսնացած աղջիկը համարվում է «պիրասա» (եզդիերենից թարգմ.՝ պառաված, տանը մնացած) և կառավարությունը պիտի իրենց համար ամուսնության տարիքը կամ թողնի նույնը կամ իջեցնի 16 տարեկան՝ իգական սեռի համար:

19 https://www.tert.am Մի՛ դժբախտացրեք եզդի աղջիկներին. Ազիզ Թամոյան

Չնայած եզդիական այլ կազմակերպությունների կողմից նշվեց[20], որ եզդիները նման ավանդույթ չունեն և վաղ ամուսնությունը եզդիական ավանդույթ չէ, այնուամենայնիվ Կառավարությունը տեղի տվեց և ամուսնության տարիքը իջեցրեց ընդհուպ մինչ 16 տարեկան:

**Այսպես կոչված «համայնքային առաջնորդի» կարծրատիպը վտանգավոր է ոչ միայն ազգային փոքրամասնությունների մասին ապատեղեկատվության տարածման տեսանկյունից, այլև շատ հաճախ օգտագործվում է քաղաքական նպատակներով և խոչընդոտ դառնում համայնքի իրական և արդյունավետ քաղաքական մասնակցությանը:**

## Թեմա 1.4 Ազգային փոքրամասնությունների իրավունքների և իրավապաշտպանների վերաբերյալ պրոպագանդան և ապատեղեկատվությունը. Սաշիկ Սուլթանյանի գործը

Ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկման բարձրացումը և խնդիրների առանց վախի բարձրաձայնումը կարևոր նշանակություն ունեն հանրային դիսկուրսի ծավալման և այս հարցերի բարձրաձայնման տեսանկյունից: Այս հարցում մեծ դեր ունեն լրատվամիջոցները, որոնք ազգային փոքրամասնություններին և նրանց իրական շահերը ներկայացնողներին

20 https://lurer.com Ու՞շ է թե՝ շուտ 19 տարեկանում ամուսնանալը. եզդիների համայնքում տեսակետները բաժանվում են

հարթակ տրամադրելով, պիտի ապահովեն իրավունքի խախտման դեպքերի լուսաբանումն ու առանձին խնդիրների մասին հանրային դիսկուրսի ծավալումը:

Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների Շրջանակային կոնվենցիայի» մոնիթորինգային խումբը, որը հանդիսանում է Հայաստանում ազգային փոքրամասնությունների խնդիրների մոնիթորինգ իրականացնող միջազգային հանձնախումբ[21], 2023 թվականին Հայաստանի մասին իր զեկույցում ներկայացնելով եզդիական համայնքի խնդիրները[22] նշում է, որ **«պետության կողմից չկա մշակված օրենսդրություն խտրականության մասին, չկա նույնիսկ խտրականության ձևակերպումը, ինչը հնարավորություն չի տալիս հայտնաբերել դրանք և իրավական ընթացք տալ»:** Զեկույցում նաև խոսվում է իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի դեմ անհիմն քրեական հետապնդման, եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պետության կողմից դրանց հաղթահարման համար ոչ բավարար ջանքերի, հանրակրթական ուսումնական նյութերում ազգային փոքրամասնությունների մասին տեղեկատվության պակասի, եզդի երեխաների թերմասնակցությանը հանրակրթությանը, եզդիերեն լեզվով կրթության ոչ արդյունավետությանն ու հանրային կյանքի տարբեր բնագավառներում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների արդյունավետ մասնակցության հետ կապված խնդիրների մասին: Խորհրդատվական խումբը կառավարությանն առաջարկում է

[21] Նման պետական մոնիթորինգային մարմիններ չկան

[22] https://rm.coe.int/5th-op-armenia-summary 5-րդ կարծիք Հայաստանի մասին, Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե

անհապաղ պաշտպանել ազգային փոքրամասնությունների խոսքի և արտահայտվելու ազատությունը՝ կանխելով դրա բացասական ազդեցությունը, ապահովել ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի ու երկրի տարբեր ոլորտներում մասնակցության մասին տեղեկությունների հրապարակումը հանրակրթական նյութերում:

Նշված թեմայով Արմենպրես լրատվական գործակալության, Հանրային Հեռուստաընկերության, Հանրային Ռադիոյի կայքե

**Արմենպրես լրատվական գործակալության մի քանի նյութեր՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ*

Այսպիսով՝ պետության կողմից ֆինանսավորվող և պետության հետ կապ ունեցող զանգվածային լրատվական միջոցները մի կողմից չեն խոսում գոյություն ունեցող խնդիրների մասին, մյուս կողմից հերքում են դրանց առկայությունը՝ իրենց կողմից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների ղեկավարների համար ասուլիսներ կազմակերպելով և հարթակներ տրամադրելով: Սա ոչ միայն խորացնում է գոյություն ունեցող խնդիրները, այլև հասարակությանը մոլորեցնելու միջոցով փոխում է հասարակական կարծիքը ազգային փոքրամասնությունների, նրանց ունեցած մարտահրավերների վերաբերյալ և էլ ավելի անհեռանկարային է դարձնում այս հարցերի լուծումը: Նման մեդիա քաղաքականության իրականացնողներից մեկը «Արմենպրես» լրատվական գործակալությունն է, որը հայտնի է խնդիրների գոյության ժխտմամբ վերնագրերով և այս թեմայով մամուլի ասուլիսներ կազմակերպելով:

Նման քաղաքականությունը գուցե կարող է ունենալ արտաքին քաղաքական նպատակներ, սակայն իրավական տեսանկյունից հակասում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, քանի որ այդպիսի պրակտիկան հնարավորություն չի տալիս հասարակական խմբերից մեկին բարձրաձայնել իր իրական խնդիրների մասին:

## Սաշիկ Սուլթանյանի գործը

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության տեսանկյունից շատ կարևոր է խնդիրների բարձրաձայնման գործընթացում հենց նրանց ընդգրկումը: Իրենց իրավունքների պաշտպանության գործընթացում ազգային փոքրամասնություններին ընդգրկելու արդյունավետ ձևերից մեկը նրանց կողմից այդ նպատակների համար կազմակերպությունների ստեղծումն է: Հայաստանում գրանցված են ավելի քան 10 եզդիական կազմակերպություններ[23], որոնցից մեծ մասի կանոնադրություններում արտացոլված է եզդիների իրավունքների պաշտպանության դրույթը, սակայն նրանց մեծամասնությունը չի գործում ինստիտուցիոնալ կերպով:

2020 թվականի մայիսի 10-ին «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» իրավապաշտպան կազմակերպության ղեկավար, ազգությամբ եզդի իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանը հարցազրույց է տվել Իրաքում գործող եզդիական «Եզիդինյուզ»[24] լրատվական կայքին, որտեղ վերջինս խոսել է Հայաստանի եզդիների շրջանում առկա խնդիրների մասին, մասնավորապես՝ ի թիվս այլ խնդիրների, Սուլթանյանը մատնանշել էր եզդիերեն լեզվի ուսուցմանն առնչող խնդիրները, իքնության պահպանության մարտահրավերները, տարբեր ոլորտներում խտրականության առկայությունն ու այդ ամենի համատեքստում պետության անգործությունն ու դրա

[23] https://www.gov.am Հաայաստանում գրանցված ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ցանկ
[24] https://yazidinews.com

հետևանքով ազգությամբ եզդիների վիճակի վատթարացումը:

Սույն հարցազրույցը հրապարակվում է սոցիալական ցանցերում հուլիսի 8-ին: Դրան հաջորդում է «Վետո» ծայրահեղական շարժման կողմից ֆեյսբուք սոցիալական ցանցում կազմակերպված մանիպուլացիաները: Հետաքրքրական է, որ դրան նախորդել էր եզդիական «Լալիշ» հեռուստաընկերության եթերով հեռարձակված մի հաղորդում[25], որի շրջանակներում հաղորդմանը մասնակցող մի քանի եզդի հոգևորական գործիչներ, որոնց գործունեությունը որևէ առնչություն չունի եզդիների իրավունքների պաշտպանության հետ, քննադատական խոսքեր էին հնչեցրել Սուլթանյանի հարցազրույցի կապակցությամբ: Իսկ դրանից շատ չանցած էլ արդեն Սուլթանյանի հարցազրույցի՝ եզդիերենից հայերեն ոչ ճշգրիտ թարգմանված տեքստը հասանելի է դառնում իրավապաշտպաններին թիրախավորող ծայրահեղական «Վետո» շարժման ղեկավար Նարեկ Մալյանին: Վերջինս այն հրապարակում է կազմակերպված մամուլի ասուլիսի[26] ժամանակ:

Հուլիսի 11-ին շարժման ղեկավար Նարեկ Մալյանը կատարում է նմանաբովանդակ մի քանի մանիպուլացիոն գրառումներ՝ նշելով, որ ***«Սաշիկ Սուլթանյանը Սորոսի***

---

[25] https://www.youtube.com Daxuyaniya Ruhanya Ezdien Armanistane

[26] https://www.youtube.com Սորոսը հայ-եզդիական թշնամանք է հրահրում. Նարեկ Մալյան

***հիմնադրամի աջակցությամբ թշնամանք է հրահրում հայերի և եզդիների միջև»:***[27]

Այդ օրերին և հաջորդող մեկ ամսվա ընթացքում սկսվում է մեդիա արշավ Սաշիկ Սուլթանյանի և «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» դեմ: Նարեկ Մալյանը նշում էր, որ եզդիներն իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներ չունեն և Սաշիկ Սուլթանյանը Սորոսի (Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան-ի) աջակցությամբ թշնամանք է հրահրում երկու ժողովուրդների միջև: Այս հայտարարություններն առաջին անգամ անելով «Արմնյուզ» հեռուստաընկերության եթերում, նա սկսում է մեդիա արշավ և նմանատիպ մտքերը տեղ են գտնում վերջինիս աջակցող էլեկտրոնային մամուլում: Նրան հարող հեռուստաընկերությունները և աուդիովիզուալ էլեկտրոնային հարթակները պատրաստում են ռեպորտաժներ, որտեղ ներկայացվում է Նարեկ Մալյանի մանիպուլացված տեսակետը՝ առանց խոսքի հնարավորություն տալու Սաշիկ Սուլթանյանին: Այդ լրատվականների թվում են՝ 168.am-ը, antifake.am-ը, yerevan.today-ը, top-new.am-ը, tert.am-ը, blognews.am-ը, panorama.am-ը, times.am-ը, zham.am-ը, armday.am-ը, iravunk.com-ը, analitik.am-ը, livenews.am-ը և այլն: Հեռուստաընկերություններից այս մեդիա արշավին ակտիվորեն մասնակցում էին «Արմնյուզ» և «Թիվի 5» հեռուստաընկերությունները:

Նշված լրատվամիջոցներից livenews.am-ի սեպտեմբերի 8-ի

[27] https://blognews.am Ներկայացնում եմ հատված Սորոսի փողերով ազգամիջյան թշնամանք հրահրող ազգությամբ եզդի Սաշիկ Սուլթանյանի հարցազրույցից

վիդեո հրապարակման[28] մեջ հաղորդման մասնակիցների կողմից անհանդուրժողականության բառամթերք է օգտագործվում և ընդհուպ բռնության կոչեր են արվում Սուլթանյանի հասցեին՝ Հայաստանի եզդիներին կոչ անելով «կոտրել նրա գլուխը», բռնության ենթարկել նրան հանդիպելիս: Հետազոտության ընթացքում պարզեցինք, որ այս և հետագայում վերջիններիս կողմից նման հայտարարությունների կապակցությամբ Սուլթանյանի՝ քրեական գործ հարուցելու պահանջին իրավապահ մարմինները որևէ ընթացք չեն տվել:

Այս մեդիա արշավից հետո գրեթե մեկ տարի անց հայտնի դարձավ, որ 2021 թվականի մայիսի 10-ին ՀՀ Ազգային Անվտանգության ծառայությունը խուզարկություններ է անցկացրել Սաշիկ Սուլթանյանի բնակարանում, մեքենայում և «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» գրասենյակում: Խուզարկվել էին նաև «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» «Խիրատ Մեդիա» լրատվականի գլխավոր խմբագիր Մուրազ Ծամոյանի, կազմակերպության այլ աշխատակիցների և կամավորների բնակարաններն ու մեքենաները: Խուզարկության ավարտին ոչինչ չհայտնաբերելով՝ ԱԱԾ-ն մեղադրանք էր առաջադրել Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ՝ նրան մեղադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի երկրորդ մասին 1-ի կետի հատկանիշներով արարքներ կատարելու համար (Ազգային կրոնական թշնամանքի տարածում՝ օգագործելով զանգվածային լրատվական միջոցները):

[28] https://www.youtube.com Թեմայով զրույցը՝ սկսած տեսանյութի 17-րդ րոպեից, բռնության կոչերը՝ 35:29-35-55 հատվածում

Այս կապակցությամբ քաղհասարակության մի շարք կազմակերպություններ տարածեցին հայտարարություն, որտեղ նշվում էր.

*«ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը, որը պետք է գործի ժողովրդավարական և իրավական պետության սահմանադրական սկզբունքների ոգուն և բնույթին համապատասխան, անցել է իր լիազորությունները եւ կամայական մեկնաբանության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածը, փոխանակ անհետևանք թողնելու ի սկզբանե անհիմն հաղորդումը, ակնհայտ հալածանք է սկսել եզդիական իրավապաշտպան կազմակերպության եւ նրա անդամների նկատմամբ:*

*ՀՀ ԱԱԾ-ի կողմից հարուցված քրեական գործը համարում ենք ակնհայտ հակասահմանադրական և մարդու իրավունքների պաշտպանության և նրան աջակցող կազմակերպությունների դեմ քաղաքական հետապնդման գործողություն, որը բնորոշ է բռնապետական ռեժիմներին:*[29]

*ՀՀ վարչապետից պահանջում ենք պատշաճ վերահսկություն իրականացնել իրեն ենթակա ԱԱԾ նկատմամբ, հակառակ դեպքում այս ապօրինի հալածանքը հավակնում է խայտառակ խարան դնել Հայաստանի առանց այդ էլ խարխլված ժողովրդավարական կարգի վրա:»*

Քրեական գործի հարուցումը և իրավապաշտանից «հաշվեհարդար» տեսնելը դատապարտեցին ոչ միայն

[29] https://pjc.am ՀՀ ազգային անվտնագության ծառայության կողմից Սաշիկ Սուլթանյանի և նրա աշխատակիցների նկատմամբ իրականացվող անօրինական հետապնդման մասին

տեղական հասարակական կազմակերպությունները, այլև ոլորտով զբաղվող միջազգային կազմակերպությունները:

Մասնավորապես՝ **Freedom House** միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը 2021 թվականի օգոստոսի 4-ին քրեական հետապնդումը դատապարտող իր հայտարարության[30] մեջ նշում է. *«Վերջին զարգացումները ցույց են տալիս, որ Հայաստանում ժողովրդավարության և իրավունքների՝ վերջին տարիների ձեռքբերումները վտանգված են: Չարդարացված քաղաքական հետապնդումը եզրի իրավապաշտպանի նկատմամբ անհանգստացնող է ինչպես Հայաստանում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքի, այնպես էլ կառավարության՝ քննադատությանն արձագանքելու տեսանկյունից:»*

**Human Rights Watch** միջազգային իրավապաշտպան կազմակերպության «Հայաստան. ակտիվիստի նենգամիտ հետապնդում» նյութում[31]» նշվում է. *«Չնայած Հայաստանի իշխանությունները կարող են համաձայն չլինել Սուլթանյանի հարցազրույցի բովանդակության հետ, դրանում նրա արտահայտած կարծիքները լիովին տեղավորվում են միջազգային իրավունքով պաշտպանվող իրավաչափ խոսքի սահմաններում: Իշխանությունները պետք է անհապաղ հրաժարվեն Սուլթանյանին առաջադրված մեղադրանքներից և ապահովեն, որ անհարկի միջամտություն չլինի նրա օրինական իրավապաշտպան աշխատանքին»:*

---

[30] https://freedomhouse.org Armenia: Authorities Must Drop Charges against Yezidi Human Rights Defender and Protect Freedom of Speech

[31] https://www.hrw.org Հայաստան. ակտիվիստի նենգամիտ հետապնդում

**ՄԱԿ-ի անդրադարձը.**

Քրեական գործի ապօրինի լինելու մասին հանդես եկան[32] ՄԱԿ-ի միանգամից երեք հատուկ զեկուցողներ՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող ֆերնանդ դե Վարենը, Իրավապաշտպանների վիճակով զեկուցող Մերի Լոուլորն ու Խոսքի ազատության հարցերով զեկուցող Իրեն Խանը: ՄԱԿ-ի փորձագետներն իրենց հայտարարության մեջ նշում էին.

*«Ազգային փոքրամասնությունների իրավունքների առնչությամբ մտահոգությունների բարձրաձայնումը թշնամանքի հարուցում կամ բռնության հրահրում չէ: Ընդհակառակը, դա կարծիքի ազատության իրավունքի հիման վրա պաշտպանվող խոսք է: Ազգային փոքրամասնությունները, ինչպիսիք են եզդիները, սպառնալիք չեն ազգային անվտանգության համար: Մենք կոչ ենք անում Հայաստանին հրաժարվել այս քրեական մեղադրանքներից, որոնք նախագծված են՝ ահաբեկելու Սաշիկ Սուլթանյանին և մյուսներին, ովքեր պաշտպանում են փոքրամասնությունների իրավունքները: Դրանք կարող են նաև լռեցնող ազդեցություն ունենան այլ իրավապաշտպանների, հատկապես երիտասարդների վրա»:*

**ԵԽ հանձնակատարի հայտարարությունը.**

Խնդրի առընչությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից պարազաբանումներ էր պահանջել նաև ԵԽ Մարդու

[32] https://hetq.am Հայաստանը պետք է հրաժարվի ազգային փոքրամասնությունների իրավունքների ակտիվիստի նկատմամբ քրեական մեղադրանքներից. ՄԱԿ-ի փորձագետներ

իրավունքների հարցերով գերագույն հանձնակատար Դունիա Միյատովիչը[33]: Վերջինս իր նամակում նշել էր.

*«Հանձնակատարը պահանջում է պարզաբանում պարոն Սուլթանյանին առաջադրված մեղադրանքների և նրա իրավապաշտպան գործունեության միջև կապի վերաբերյալ: Հաշվի առնելով մարդու իրավունքների միջազգային և ազգային դերակատարների կողմից նրա հետապնդման վերաբերյալ հայտնած լուրջ մտահոգությունները՝ Դունյա Միյատովիչը վերահաստատում է Հայաստանի իշխանությունների պարտավորությունները, այն է՝ ապահովել անվտանգ միջավայր, որը նպաստում է մարդու իրավունքների պաշտպանների աշխատանքին»:*

Գործին անդրադարձավ նաև **ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը**, որը կիսելով միջազգային կազմակերպությունների տեսակետը՝ նշեց[34]. *«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշմամբ իրավապաշտպանների, հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Freedom House» միջազգային իրավապաշտպան կազմակերպության մտահոգությունները Հայաստանում գործող «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» ՀԿ նախագահ Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման առնչությամբ պետք է պատշաճ հաշվի առնվեն և դառնան քրեական հետապնդման մարմինների*

---

[33] https://www.panorama.am ԵԽ հանձնակատարը գլխավոր դատախազությունից պարզաբանում է պահանջում Սաշիկ Սուլթանյանի դեմ հարուցված քրգործի վերաբերյալ

[34] https://forrights.am Արման Թաթոյանը անդրադարձել է Սաշիկ Սուլթանյանի գործին

*լրացուցիչ քննարկման առարկան: Այս առումով իրավապաշտպանների և ՀԿ-ների հայտարարություններին ուղղված Գլխավոր դատախազության օգոստոսի 5-ի հրապարակային արձագանքը՝ կապված Սաշիկ Սուլթանյանի իրավունքների հետ, պարունակում է քննադատական խոսքին կամ իրավապաշտպան գործունեությանը վերաբերող վտանգավոր շեշտադրումներ և առաջացնում է լրացուցիչ մտահոգություններ»:*

Չնայած ոլորտով զբաղվող միջազգային և տեղական կազմակերպությունների հայտարարություններին՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից քրեական հետապնդումը չդադարեցվեց: Ընդհակառակը՝ գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվեց դատարան, իսկ մանիպուլացիոն մեդիահոսքերը դատավարության ընթացքում էլ չէին դադարում: Տարբեր ծայրահեղական հասարակական-քաղաքական շրջանակներ շարունակում էին մեդիա արշավն ընդդեմ եզդի իրավապաշտպանի՝ օգտագործելով այդ քրեական գործը նաև ընդդեմ Հայաստանում Բաց Հասարակության Հիմանադրամների՝ այդպիսով արհեստականորեն ստեղծելով և տարածելով օտարերկրյա գործակալների կամ սորոսական գործակալների մասին կեղծ թեզը:

Հայաստանյան մեդիա դաշտում Սուլթանյանի գործով դատապարտող հայտարարությունները բավարար կերպով չտարածվեցին: Լրատվականները, որոնք մասնակցում էին Սուլթանյանի դեմ իրականացվող մանիպուլացիոն մեդիա արշավին, նույնիսկ չարտատպեցին այդ հայտարարությունները, ինչը ևս մեկ անգամ խոսում է նրանց

**ուղղորդված լինելու և մեդիա արշավի կազմակերպված բնույթի մասին:**

**Հանրային Հեռուստաընկերությունը, Արմենպրես լրատվական գործակալությունը, որոնք բավական ակտիվ կերպով տարածում են միջազգային կառույցների՝ Հայաստանի վերաբերյալ հայտարարությունները, որևէ անդրադարձ չեն կատարել երբևէ ո՛չ այս հայտարարություններին, ո՛չ Սուլթանյանի նկատմամբ քրեական հետապնդմանը՝ այսպիսով մեդիա տիրույթում տեղ թողնելով միայն ապատեղեկատվությանն ու մանիպուլացիաներին, անգործության միջոցով նպաստելով կեղծ թեզերի տարածմանն ու ազգային փոքրամասնությունների հարցերով իրավապաշտպանի լռեցմանը:**

Այն հանգամանքը, որ նման մեդիա մանիպուլացիաները, լրագրողական էթիկայի կանոնները խախտելը տեղի են ունենում ոչ միայն անհատ ազգությամբ եզդիների նկատմամբ, այլև եզդիական կազմակերպությունների ու գործիչների նկատմամբ, ցույց է տալիս, որ մեդիա դաշտը խրախուսող չէ ազգային փոքրամասնությունների խնդիրները հանրային դաշտ բերելու տեսանկյունից: Մեդիան շատ հաճախ օգտագործվում է որպես գործիք տարբեր ծայրահեղական հասարակական և քաղաքական խմբերի կողմից՝ ազգային փոքրամասնությունների աշխատանքը խանգարելու և կասեցնելու համար: Սուլթանյան դեմ իրականացված մեդիա արշավի ընթացքում ականատես ենք դառնում նաև ազգությամբ և իրավապաշտպան լինելու հանգամանքով պայմանավորված բռնության և ատելության կոչերի, որոնք այդպես էլ որևէ հանրային և իրավական

գնահատականի չեն արժանանանում ո՛չ պետական մեդիայի, ո՛չ ոլորտի համար պատասխանատու մարմինների կողմից: Այս համատեքստում արժեքավոր նշանակություն ունեն մարդու իրավունքների նկատմամբ զգայուն անհատ հասարակական գործիչների, հասարակական կազմակերպությունների և անկախ մամուլի հայտարարությունները, որոնք թեպետ անաչառորեն լուսաբանում են թեման, բայց այդուհանդերձ իրենց լսարանով համեմատելի չեն ծայրահեղական խմբերին պատկանող և նրանց աջակցող լրատվամիջոցների լսարանին:

# ՄԱՍ 2

## ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿԵՆՑԱՂ-ՁԲԱՂ-ՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ

Ժամանակակից աշխարհում զանգվածային լրատվության միջոցները հանդիսանում են հասարակական կարծիքի ձևավորման առաջնային ինստիտուտ: Տեղեկատվական հոսքերը, որոնք հասնում են մարդկանց հեռուստատեսության, ռադիոյի, սոցիալական մեդիայի էջերի, ինտերնետային կայքերի և թերթերի միջոցով, երբեմն նպաստում են լսարանի մոտ ստացված ինֆորմացիային քննադատաբար մոտենալու կարողության անկմանը և մարդիկ շատ ինֆորմացիոն հոսքեր սկսում են ընդունել որպես բացարձակ ճշմարտություններ: Դրա հետևանքվ մարդկանց մոտ ձևավորվում են նաև բացասական կարծրատիպեր, որոնք հետագայում վերացնելը բավականին դժվար է լինում:

Վերջին ժամանակներում հայկական հեռուստա-ընկերությունները շատ հաճախ են անդրադարձ կատարում ազգային փոքրամասնությունների թեմային, այդ անդրադարձների շրջանակում հարցազրույցներ են անցկացվում տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելու իրենց ազգի պատմությունը և մշակույթը և դրանով իսկ բարձրացնելու հասարակության իրազեկության մակարդակը այդ ամենի վերաբերյալ: Շատ հաճախ մեդիա նյութերում, սակայն, փոքրամասնությունների համայնքների մասին սխալ կամ ոչ ճիշտ մեկնաբանումները նպաստում են վերջիններիս, նրանց ավանդույթների և

մշակույթի մասին սխալ և կարծրատիպային կարծիքների ձևավորմանը հայ հասարակության մոտ: Եվ փոխանակ մեդիան հակազդի նման կարծրատիպերի տարածմանը, շատ հաճախ ընդհակառակը՝ հենց ինքն է ստեղծում և նպաստում դրանց տարածմանը:

Առհասարակ, հայկական մեդիադաշտը խորապես ուսումնասիրելիս բավական շատ ակնառու թերություններով մեդիանյութեր են նկատվում ազգային փոքրա-մասնություններին ներկայացնելիս:

Մեր ուսումնասիրության առարկան ՀՀ-ում բնակվող ամենամեծ ազգային փոքրամասնության՝ եզդիական համայնքի մասին հրապարկվող մեդիանյութերն են: Նախ, պետք է ընդգծել, որ եզդիների մասին բավական շատ անդրադարձ կա ԶԼՄ-ներում, հատկապես երբ համեմատում ենք նախորդ տարիների հետ: Սակայն, ինչքան շատ են լույս տեսնում նմանատիպ նյութեր, այդքան նրանց մասին ավելի շատ սխալ պատկերացումների ու կարծրատիպերի կարելի է հանդիպել:

Ազգային փոքրամասնություններին լուսաբանելիս հանդիպող առաջին թերացումը թերևս թեմաների ընտրությունն է: ԶԼՄ-ներում հանդիպող նյութերի թեմատիկան հիմնականում սոցիալական, կենցաղային կամ մշակութայինն է: Ընդ որում՝ մշակութային ասելով, ենթադրվում են այնպիսի նյութեր, որոնք հիմնականում նկարագրում են ազգային փոքրամասնությունների տոնական ավանդույթները, մինչդեռ ազգային փոքրամասնության մշակույթը միայն ազգային տոները չեն:

Ստորև անդրադարձ կկատարենք հայկական մեդիայի կողմից եզդիների կենցաղ-զբաղմունքային, սոցիալ-մշակութային կարծրատիպերին և Հայկական մեդիայում հիմնական տարածված սխալներին: Հետազոտության համար ընտրվել են հայկական մի շարք լրատվամիջոցներ:

## Թեմա 2.1 Սոցիալական կարծրատիպերի ստեղծումն ու տարածումը լրատվամիջոցներով

### Ազգային պատկանելիրության շեշտումը լրագրողական վերնագրերում. Ազգության անհարկի մատնանշումն ու մեդիա հրապարակումների ոչ զգայուն վերնագրերը՝ հասարակության շրջանում անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծման գործոն:

Ձանգվածային լրատվության միջոցներում հաճախ հանդիպող խնդիրներից է ազգության կամ ազգային պատկանելիության անհարկի մատնանշումը և թիրախավորումը: Օրինակ՝ երբ հրապարակվում է որևէ հանցագործության մասին նյութ, հաճախ նյութում, և որ ավելի վատ է, հենց վերնագրում հատուկ շեշտադրվում է հանցագործությունը կատարած անձի ազգային պատկանելիությունը: Այս հարցը միշտ եղել է իրավապաշտպանների և հասարակական կազմակերպությունների ուշադրության տիրույթում: Հաճախ ազգային պատկանելիության մասին տեղեկատվությունը տրամադրում են հենց իրավապահ մարմիններն իրենց մամուլի հաղորդագրություններում, լրատվամիջոցներն էլ նույնությամբ արտատպում են այդ հաղորդագրությունները՝

առանց փոփոխությունների, կրճատումների կամ հավելումներ անելու:

Նման հաղորդագրություններում և մեդիա նյութերում ազգության կամ ինքնության մատնանշումը կարող է հասարակության շրջանում ստեղծել անհանդուր-ժողականության մթնոլորտ և ձևավորի իրականությանը չհամապատասխանող կարծիք որևէ խմբի մասին:

Ուսումնասիրության ընթացքում նկատեցինք, որ մամուլում եզդիների մասին ընդհանուր առմամբ բացասական կամ նրանց նկատմամբ անհանդուրժողականության ռիսկեր ստեղծող տարբեր իրադարձությունների լուսաբանման նյութերն ու վերնագրերը զգալի են: Օրինակ՝ «Առավոտ» օրաթերթը 2019թ. դեկտեմբերին եզդի զինվորի մահվան դեպքով պայմանավորված բողոքի ակցիան լուսաբանելիս նյութի վերնագիր էր դրել սա. **«Թքել եմ ձեր բանակի վրա էլ, ձեր հայրենիքի վրա էլ». մահացած եզդի զինվորի մայր»**[35]: Նյութի հրապարակումից հետո բազմաթիվ էին համացանցում օգտատերերի կողմից արված վիրավորական մեկնաբանությունները, ազգայնամոլական կոչերը և այլն: Թեպետ որոշ ժամանակ անց խմբագրությունը փոխեց նյութի վերնագիրը, այնումենայնիվ, նյութը հասցրեց բավական լայն տարածվել և քննարկվել համացանցային տիրույթում: Թեև նյութի սկզբնական վերնագրում օգտագործվել էր որդուն կորցրած մոր խոսքից մեջբերումը, այնուամենայնիվ, վերնագրի նման ընտրությունը և տեքստում դրա կիրառումը հանգեցրել են մի շարք վատ հետևանքների, ընդհուպ՝ անհանդուրժողականության և ատելության խոսքի

[35] https://www.aravot.am Մահացած զինվորի հարազատները սպառնում են որդու դին բերել ու դնել ԱԺ-ի մոտ

տարածման եզդիական համայնքի դեմ: Ճիշտ է՝ լրատվականը որևէ միտումնավոր արարք չէր կատարել, սակայն լրագրողական էթիկայի տեսանկյունից կարևոր է, որ հրապարակումներ կատարելուց առաջ խմբագրությունը կանխատեսի և մոտավոր պատկերացում ունենա, թե ինչի կարող են հանգեցնել նմանատիպ վերնագրերով հրապարակումները:

«Առավոտ» օրաթերթի կայքում հանդիպեցինք նաև նմանատիպ մեկ այլ վերնագրով հեղինակային նյութի: Նյութը վերնագրված է՝ ***«Ես եզդի աղջիկ հարս չեմ բերի»***[36]***:*** Ինքնին նյութը, որը գուցե գրվել է եզդիների նկատմամբ խտրական վերաբերմունքը ցույց տալու համար, նման վերնագրի ընտրությամբ կարող է խտրականացնել որևէ խումբ կամ անհանդուրժողականությանը նպաստող գործոն դառնալ: Նյութում փորձ է արվում ցուցադրել որոշ հայերի կողմից առկա բացասական վերաբերմունքը եզդիների նկատմամբ, իսկ եզդի կնոջ կերպարի ոչ ճշգրիտ մատուցումը էլ ավելի է սրում կարծրատիպերի ստեղծումը հանրության մեջ: Ստացվում է, որ ընտրված վերնագիրն ու նյութի հիմնական բովանդակությունը միմյանց հետ մեծամասամբ կապ չունեն:

Մեկ այլ մանիպուլյացիոն վերնագիր իր նյութի համար ընտրել էր tert.am-ը, գրելով. **«Դուք էլ եք էլի փոքրամասնություն». Կնյազ Հասանովը՝ հայերի մասին:**[37]

---

[36] https://www.aravot.am «Ես եզդի աղջիկ հարս չեմ բերի»

[37] https://www.tert.am«Դուք էլ եք էլի փոքրամասնություն». Կնյազ Հասանովը՝ հայերի մասին

Այստեղ էլ նյութի վերնագիրը չի համապատասխանում բուն նյութի բովանդակությանը և պատգամավորի հնչեցրած մտքին, այն կտրված է կոնտեքստից: Բուն հոդվածում նշվում է Կնյազ Հասանովի աբողջական միտքը, որտեղ ասվում է՝ «**Դե դուք էլ եք փոքրամասնություն ինչ-որ տեղ: Այսօր մենք 4 ազգային փոքրամասնության ներկայացուցիչներով Ազգային ժողովում ենք, դա հայ ժողովրդի բարի կամքն է**»: Այստեղ երևում է, որ Հասանովի միտքը բացասական իմաստով չի արտահայտվել, այլ ընդհակառակը: Կրկին այսպիսի շեշտադրումով վերնագիրը կարող է ընթերցողի մոտ տպավորություն ստեղծի, որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորը վիրավորում կամ բացասական կերպով ակնարկում է ազգային մեծամասնությանը: Իրականում՝ նման վերնագիրը ցույց է տալիս վերաբերմունք, այս դեպքում՝ բացասական: Այս նյութում նաև Կնյազ Հասանովը նյութում ներկայացվում է որպես ԱԺ-ում եզդիական համայնքի ներկայացուցիչ: Իրականում վերջինս հանդիսանում է քրդական համայնքի ներկայացուցիչը:

**Սոցիալական խնդիրները միայն կեցության կամ կենցաղային կոնտեքստում դիտարկելու պրակտիկան լրատվամիջոցներով.**

Հետազոտությունը ցույց տվեց, որ հայկական մեդիան ազգային փոքրամասնությունների սոցիալական խնդիրները լուսաբանելիս, գլխավորապես դրանք դիտարկում ու լուսաբանում է տնտեսական և նյութական խնդիրների համատեքստից ելնելով: Մեդիայով ավելի քիչ են անդրադառնում այն իրական սոցիալական խնդիրներին և

վտանգներին, որոնց բախվում են ազգային փոքրամասնությունները: Խոսքը վերաբերում է լեզվի, կրոնի, ազգային ինքնության պահպանման խնդիրներին, որի վտանգի առաջ կանգնած են հատկապես այն ազգային փոքրամասնությունները, որոնք չունեն պետականություն: Մեդիայում որքան քիչ է անդրադարձ կատարվում այս թեմաներին, այնքան այդ ոլորտում խնդիրները կարող են խորանալ:

Նմանատիպ բովանդակություն ունի, օրինակ՝ Հայաստանի Հանրային Ռադիոյում հրապարակված **«Հայաստանում ազգային փոքրամասնությունների հիմնական խնդիրը սոցիալականն է»** խորագրով նյութը[38], որտեղ հիմնականում խոսվում է ազգային փոքրամասնությունների դեմ ծառացած խնդիրներից և նշվում, որ նույն խնդիրն ունեն նաև տեղացիները՝ հայերը. *«Հայաստանաբնակ ազգային փոքրամասնությունների խնդիրները չեն տարբերվում հայկական ընտանիքների հոգսերից՝ սոցիալ-տնտեսական հարցեր, ֆինանսական դժվարություններ, կենցաղը բարելավելուն միտված ամենօրյա աշխատանքներ»,-* ասվում է հրապարակման մեջ:

Թեպետ Հայաստանում ազգային փոքրամասնությունների հիմնական խնդիրների մի մասը, իսկապես, սոցիալ-տնտեսական են, որը բնորոշ է նաև հայերին, այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունները՝ պայմանավորված իրենց խոցելի խումբ լինելով, ունեն նաև մի շարք ավելի կարևոր խնդիրներ, որը բնորոշ է միայն ազգային փոքրամասնություններին՝ լեզվի, կրոնի, մշակույթի պահպանություն և զարգացում, ազգային փոքրամաս-

[38] https://hy.armradio.am Հայաստանում ազգային փոքրամասնությունների հիմնական խնդիրը սոցիալականն է

նությունների իրավունքների մասին իրազեկման բարձրացում, ասիմիլացման վտանգից զերծ մնալը, ազգային առանձնահատկությունների պահպանում և այլն:
Հետազոտությունը ցույց տվեց, որ այս հարցերն ու խնդիրները գլխավորապես վրիպում են հայաստանյան զանգվածային լրատվության միջոցների աչքից, առավել ևս՝ Հանրային ռադիոյի և Հանրային հեռուստաընկերության, որոնք նաև միջազգային և ներպետական իրավական կարգավորումներով սահմանված դրույթներով պետք է օգնեին վեր հանել վերոնշյալ խնդիրները և նպաստել դրանց շուրջ հանրային օրակարգի ձևավորմանը: Դիտարկելով Հանրային հեռուստաընկերության լուսաբանումները ազգային փոքրամասնությունների համայնքների մասին, նկատում ենք, որ դրանք գլխավորապես այդ համայնքների մշակույթների, նրանց կրոնական միջոցառումների և ազգային տոնակատարությունների մասին տեսաշարեր ու հաղորդումներ են: Ազգային փոքրամասնությունների իրավունքների և նրանց հիմնախնդիրներին վերաբերվող մեդիա նյութերը գրեթե բացակայում են: Այսպիսի գործելաոճով հանրային հեռարձակող ազգային կառույցը փաստացի խուսափում է խոսելու ազգային փոքրամասնությունների իրական սոցիալական խնդիրների մասին:

Հետազոտության ընթացքում որպես դրական օրինակ ուշադրութուն գրավեց ՍիվիլՆեթի կազմակերպած քննարկումը[39] ազգային փոքրամասնությունների համայնք-

[39] https://www.civilnet.am Ազգային փոքրամասնությունների՝ նման և տարբեր խնդիրները

ների ներկայացուցիչների և ազգագրագետ Հրանուշ Խառատյանի մասնակցությամբ, որտեղ քննարկվում են Նոր Սահմանադրությամբ և Նոր Ընտրական օրենսգրքի նախագծով Ազգային ժողովում ազգային փոքրամասնություններին տրամադրվող 4 քվոտային տեղերի անարդյունավետության մասին, ինչպես նաև անցում է կատարվում ՀՀ Վարչապետին առընթեր Ազգային փոքրամասնությունների խորհրդի անգործության, այնտեղ ներգրավված ՀԿ-ների գործունեության անարդյու-նավետության և նրանց փոխարինելու անհրաժեշտության մասին:

Նմանատիպ քննարկումներն ու մեդիա հարթակների ստեղծումը չափազանց կարևոր են ազգային փոքրամասնությունների իրական խնդիրների շուրջ հանրային օրակարգ ձևավորելու և ազգային փոքրամասնությունների խնդիրներին առավել մեծ կարևորություն հաղորդելու համար: Ներկայումս նման հարթակ Հայաստանում միայն եզդիական «Խիրատ Մեդիան»[40] է, որը շարունակաբար լուսաբանում և բարձրաձայնում է ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների մասին:

[40] XiretMedia Խիրատ Մեդիան նախագիծ է, որը լուսաբանում է եզդիների կյանքը, մշակույթը, արվեստը, ավանդույթները, եզդի ժողովրդի սխրանքներն ու պատմությունը: Խիրատ Մեդիան միաժամանակ պատրաստում է մարդու իրավունքների, մասնավորապես՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների և խնդիրների մասին տեղեկատվական հոլովակներ և հաղորդումներ

## Տարբեր ժողովուրդներ-մեկ ազգ խոսույթի շրջանառություն. Ազգերի ձուլումը որպես բարե-կամության օրինակ դիտարկելու պրակտիկան

Ըստ ամերիկացի հետազոտող Նիկքի Լիզա Քոլի՝ ասիմիլացիան առավել հաճախ դրսևորվում է փոքրամասնության ներգաղթյալ խմբերի շրջանում, որոնք հաստատվելով որևէ երկրում, սկսում են ընդունել մեծամասնության մշակույթը, արժեքները, գաղափարները, վարքագիծը, մենթալիտետը, և իհարկե, լեզուն[41]: Այս գործընթացը կարող է հարկադրաբար կամ ինքնաբուխ լինել և կարող է լինել արագ կամ աստիճանաբար: Այն հիմնականում դրսևորվում է տվյալ երկիր ներգաղթած հասարակության հետնորդների՝ նրանց զավակների շրջանում, պայմանավորված նրանով, որ այդ առաջին սերնդի երեխաները կինտեգրվեն հասարակության մեջ, որը տարբերվում է իրենց ծնողների հայրենիքից: Եվ ինչքան թարմանում է սերունդը, դեպի հասարակություն նոր ինտեգրվող սերունդը քիչ հավանական է, որ պահպանեն իրենց նախնիների մշակույթի և ավանդույթների տերմինները, լեզուն, և մշակութայնորեն անհամատեղելի զգալով մեծամասնության մշակույթից, սկսվում է նրանց առանձնահատկությունների յուրացման և միաձուլման գործընթացը: Շատ հաճախ պատահում է, որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչը, չցանկանալով տարբերվել մեծամասնության համայնքից, թաքցնում է նաև իր ազգությունը, կրոնը, էթնիկ պատկանելիությունը:

---

[41] https://www.thoughtco.com Nicki Lisa Cole, Ph.D, Definition, Overview and Theories of Assimilation

Սակայն, այլ մշակույթին անցնելու կամավոր բնույթը ինչքան ավելի գրավիչ է, և այդկերպ ավելի է հարմարեցնում անհատին հասարակությանը, նույնքան էլ վտանգավոր է ազգային ինքնության կորստի տեսանկյունից: Այստեղ է, որ մեծ կարիք է առաջանում, որպեսզի պետությունը որդեգրի այնպիսի քաղաքականություն, որի միջոցով ստեղծվի այնպիսի հասարակական-քաղաքական միջավայր, որում խրախուսվի յուրաքանչյուր էթնիկ խմբի ինքնության պահպանումն ու զարգացումը, հասարակության մեջ մշակութային բազմազանության արժեքների տարածումը, և ազգային փոքրամասնությունները կարևորեն սեփական ինքնության պահպանումն ու զերծ մնան ասիմիլացումից:

Հայաստանում ապրում են 11 ազգային փոքրա-մասնություններ՝ տարբեր էթնիկ և մշակութային առանձահատկություններով: Այդ փոքրամասնություններից որոշները, ինչպիսիք են ասորիներն ու եզդիները, Հայաստան որոշակի փուլերով և խմբերով են ներգաղթել: Որոշակի թվով ասորիների և եզդիների խմբեր Հայաստան գաղթել են 1915-1918 թվականներին հայերի հետ միասին՝ Օսմանյան Թուրքիայում ոչ մուսուլման ժողովուրդների նկատմամբ իրականացվող հալածանքների քաղաքականության և բռնությունների պատճառով: Այս ժողովուրդները, հայերի հետ միասին ունենալով նույն ճակատագիրն ու ճանապարհը, համատեղ պայքարելով Հայաստանի պետության անկախության համար, ի սկզբանե ընդունում են Հայաստանը որպես երկրորդ հայրենիք, հայերին՝ եղբայրական ժողովուրդ և ժամանակի ընթացքում վերցնում, յուրացնում հայկական մենթալիտետին բնորոշ առանձնահատկություններ: Առաջին բանը, որը վերցնում է ազգային փոքրամասնությունը մեծամասնության մեջ ինտեգրվելու համար, դա լեզուն է:

Դրան հաջորդում է վարքագիծը, ապա ազգային տոները միմյանց հետ նշելն ու մեկը մյուսի ազգային տոներն ու նիստուկացը յուրացնելը: Այն ազգային փոքրամասնությունները, որոնք տարբերվում են մեծամասնությունից իրենց հավատքով, փորձում են հիմնականում պահել այն: Հատկապես եզդիները, որոնք համարվում են պահպանողական համայնք, երկար ճանապարհ անցնելով հայերի հետ, փորձել են պահել կրոնը, քանի որ հատկապես եզդիական ինքնության պահպանման հիմքում հենց ազգային կրոնն է ընկած: Չնայած սրան, այսօր Հայաստանում շատ եզդիներ կան, ովքեր իրենց համարում են քրիստոնյաներ: Հայերի հետ ասիմիլացման նշաններից է նաև եզդիական ազգանունների պատմական ձևի փոփոխությունը հայկական «յան» վերջավորությանը:

Ամեն դեպքում, անցնելով շատ դժվարությունների միջով, եզդիական համայնքը փորձել է պահպանել իր ազգային դիմագիծը և հայերի հետ հաստատել ջերմ բարեկամական հարաբերություններ: Եվ այս համատեքստում հայկական մեդիան շատ հաճախ լուսաբանման ընթացքում շեշտը դնում է հայերի ու վերջիններիս բարեկամական հարաբերություններին՝ լուսանցքում թողնելով այն խնդիրները, որոնց բախվում են ազգային փոքրամասնությունները՝ իրենց իրավունքների պաշտպանության և ազգային ինքնության պահանման տեսանկյունից: Հենց այս քաղաքականության դրսևորումներն ենք նկատում Հանրային հեռուստատեսության լուսաբանումներում: Մասնավորապես՝ Հայաստանի միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների համաձայն, Հանրային հեռուստաընկերության կողմից վերջին տարիներին ստեղծվել են երկու հաղորդաշարեր, որոնք նպատակ ունեն լուսաբանել ՀՀ-ում ապրող ազգային

փոքրամասնություններին: Դրանք են՝ **Էթնոգույներ**[42] և **Կողք Կողքի**[43] հաղորդումները: «**Տարբեր ժողովուրդներ-մեկ ազգ**», «**հայ ազգի եզդի զավակ**», «**հայ-եզդիական դարավոր բարեկամություն**» և նմանատիպ խոսույթները սկսեցին շրջանառվել հենց եզդիական համայնքի որոշ ներկայացուցիչների կողմից, ովքեր էլ հենց Հանրային հեռուստաընկերության այդ հաղորդաշարերի հիմնական հերոսներն են: Առհասարակ, այդ հաղորդումների հիմնական գիծը եզդիական ազգային սովորույթներն ու ավանդույթներն են, կենցաղային զբաղմունքային ձևերը, տոները, մշակութային առանձնահատկությունները, իսկ իրավունքների ու խնդիրների մասին՝ ոչ մի անդրադարձ:

Հետազոտության ընթացքում ուշադրություն գրավեց եզդի կնոջ մասին Ամերիկայի ձայնի պատրաստած տեսանյութը՝ «**Ես հայ ազգի եզդի զավակն եմ. Մի կնոջ պատմություն**»[44] վերնագրով: Նյութն հայաստանաբնակ եզդի կնոջ կյանքի, դժվարությունների, հայ հասարակության մեջ ինտեգրվելու, Հայաստանն իբրև հայրենիք ընդունելու մասին է: Այն պատրաստվել է բավականին որակյալ, սակայն նյութի նման վերնագիրը կոտրում է ողջ գեղեցիկ տպավորությունը, քանի որ այդպիսի վերնագիրն ինքնին արտահայտում է երկու ազգերի միաձուլման, ազգային ինքնության և դիմագծի կորստի, ասիմիլացման գաղափար: Այսպիսի շեշտադրումներով վերնագրերն ընթերցողների կամ դիտողների լայն շրջանակների համար գուցե «նորմալ» դիտարկվեն, սակայն ազգային փոքրամասնությունների

---

[42] https://www.youtube.com Էթնոգույներ. Եզդիներ

[43] https://www.youtube.com Կողք կողքի. Եզդիներ

[44] https://www.amerikayidzayn.com Ես հայ ազգի եզդի զավակն եմ. Մի կնոջ պատմություն

ինքնության պահպանման տեսանկյունից դրանք խիստ մտահոգիչ են և կարող են էապես նպաստեն ձուլման մեսիջների տարածմանը: Այլ կերպ ասած՝ մեդիա նյութերի վերնագրերն ու այդտեղ օգտագործվող խոսույթը չափազանց կարևոր են ազգային փոքրամասնությունների ինքնությանը վերաբերվող հարցերում զգայուն մոտեցում ցուցաբերելու կոնտեքստում:

## Հայաստանի մոնոէթնիկության խոսույթը. քարոզչություն լրատվամիջոցների կողմից

Բոլոր հասարակությունները ժամանակակից աշխարհում բազմաէթնիկ և բազմազգ են: Էթնիկ բազմազանությունը կարող է հարստացնել հասարակությանը, քանի որ այն դարձնում է ավելի գրավիչ, մրցունակ և բարեկեցիկ: Ժամանակակից աշխարհում դեմոկրատական զարգացման ուղղին ընտրած բոլոր երկրներն այլևս զերծ են մնում իրենց մոնոէթնիկ բնութագրել, նույնիսկ եթե տվյալ երկրում ազգային փոքրամասնությունները շատ փոքր տոկոս են կազմում: Ըստ կանադացի գիտնական Ուիլ Կիմլիկայի՝ եթե մի տարածքում ապրում են երկուսից ավելի ազգեր, տվյալ պետությունը չի կարող անվանվել մոնոէթնիկ պետություն:[45]

Հայաստանյան հասարակության մեջ պարբերաբար նշվում է, գերակայում է այն տեսակետը, որ Հայաաստանը մոնոէթնիկ երկիր է, քանի որ ազգային փոքրամասնությունները մեզ մոտ կազմում են բնակչության երկու տոկոսը միայն: Այս դիրքավորումը, որը մեծամասամբ շարունակում է

[45] Will Kymlicka, Multicultural Citizenship: A liberal theory of Minority rights, 07 April 2016

տիրապետող լինել Հայաստանյան հասարակական-քաղաքական դիսկուրսում, զուտ սոցիոլոգիական կատեգորիա է, որը ժամանակակից ժողովրդավարական աշխարհում գնալով կորցնում է իր արդիականությունը: Մոնոէթնիկ պետության գաղափարախոսությունը շատ հաճախ էական խոչընդոտ է դառնում Հայաստանում պաշտոնապես ճանաչված և մեր կողքին ապրող 11 ազգային փոքրամասնությունների համայնքներին, նրանց նիստ ու կացը, մշակույթն ու ավանդույթները, իրավունքները ճանաչելու և հարգելու համար, մյուս կողմից՝ մոնոէթնիկության քաղաքականությունն ու գաղափարը կարող է պատնեշներ ստեղծել ազգային փոքրամասնության համայնքերի համար՝ երկրում տեղի ունեցող կարևորագույն գործընթացներին մասնակցելու և ներառվելու տեսանկյունից, ինչն էլ կարող է հանգեցնել հասարակության մեջ փոքրամասնություն կազմող խմբերի օտարացմանը:

Հենց այսպիսի մոտեցումն էլ տարբեր դրսևորումներով ուրվագծվում է նաև հայկական ԶԼՄ-ներում: Լրատվամիջոցների հրապարակումներում մինչև ազգային փոքրամասնությունների մասին խոսել սկսելը, հիմնականում ցիտվում է այն միտքը, որ ՀՀ-ն մոնոէթնիկ պետություն է և որ մեր երկրում միայն 2 տոկոսն են կազմում ազգային փոքրամասնությունները: Ժողովրդավարական պետություն-ները չպետք է իրենց բնորոշեն մոնոէթնիկ տերմինով՝ այդպիսով մատնանշելով պետության պատկանելիությունը միայն այս կամ այն կոնկրետ էթնիկ խմբին կամ խմբերին: Բնորոշելով մեզ որպես մոնոէթնիկ պետություն, ըստ էության մենք բարդացնում ենք, իսկ երբեմն անհնարին ենք դարձնում մեզանում իրական ներառական հասարակության ձևավորումը:

Այս համատեքստում հետազոտության ընթացքում ուշադրություն գրավեցին հատկապես այն մեծ թվով մեդիա հրապարկումները, որոնցում պաշտոնատար անձինք շնորհավորական տարբեր ուղերձներ հղելիս հիշում ու շնորհավորում են միայն **հայ զինվորին, հայ կանանց, հայ ազգին,** այդպիսով անտեսելով երկրում ապրող ազգային փոքրամասնություններին: Սա հենց մոնոէթնիկության քաղաքականության դրսևորումն է մեդիայում, երբ շատ հաճախ պաշտոնատար անձինք կամ մեդիայում աշխատող անձինք իրենց խոսքում կարող են չնկատել, թե ինչպես է այդ խոսքը դառնում բացառող այն սովորական թվացող արտահայտություններում, որոնք իրականում առանձնացնում են մեր հասարակության ներսում մարդկանց մի խմբին և անտեսանելի են թողնում մյուս խմբին:




** Լրատվամիջոցներից առանձնացված մի քանի նյութեր, որոնցում օգտագործվել է ազգային փոքրամասնություններին բացառող կամ անտեսող բառապաշար*

## Վաղ ամուսնությունը եզդիական ազգային ավանդույթ ներկայացնելու պրակտիկա. նման «ավանդույթ» եզդիական համայնքը չունի

Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրություն գրավեցին այն մեդիա հրապարակումներն ու նյութերը, որոնցում անդրադարձ է կատարվում եզդիական համայնքում տարածված վաղ ամուսնությունների հիմնախնդրին: Ստորև առանձնացնենք մի քանի հրապարակումներ, որոնցում

խոսվում է եզդի աղջիկների կրթության իրավունքի խախտման և վաղ հասակում նրանց ամուսնության խնդրի մասին և բոլոր հրապարակումներում խնդիրը ներկայացնելիս այն բնութագրելու համար կիրառվել է «ազգային ավանդույթ» եզրույթը:

«**Եզդի համայնքի ավանդույթները** *ստիպում են դեռահաս աղջիկներին լքել դպրոցը, որ պատրաստվեն ամուսնության»*[46]:

«**Ավանդույթներն** *այդքան խստորեն չպահպանող ընտանիքների երեխաներին Ինեսան խորհուրդ է տալիս ամեն գնով գոնե ավարտել միջնակարգ դպրոցը: Իսկ այն ընտանիքներում, որտեղ եզդիական սովորույթները խստությամբ պահպանվում են, Ինեսայի խոսերով, հնարավոր չէ ոչինչ փոխել»*[47]:

«*Սակայն Ֆերիկ գյուղում կրթությանը հաղթում է* **ավանդույթը**:
**Օրենքն ընդդեմ ավանդույթների***: Ինչպես և շատ ավանդույթներ, վաղ ամուսնությունները եզդիների էթնիկ ինքնության պահպանման խորհրդանիշն են»*[48]*:*

«*Այդ* **ավանդույթներից***, օրինակ, վաղ ամուսնությունը մինչ այսօր էլ պահպանվում է աշխարհի շատ երկրների եզդի համայնքներում. այդպես են ապրում նաև հայաստանաբնակ եզդիները»*[49]*:*

ՁԼՄ-ների ուշադրությունից այս խնդիրների լուսաբանումը դուրս չի մնում և դա շատ կարևոր է: Թեև եզդիական

---

[46] https://hetq.am Եզդի աղջիկները դատապարտված են վաղ ամուսնության

[47] https://hetq.am Եզդի կնոջ կյանք. «ադաթի» ու պատվի անփոխարինելիություն

[48] https://oc-media.org Եզդի աղջիկներից ու տղաներից շատերը չեն ավարտում դպրոցը

[49] https://a1plus.am «Եզդի կանայք. պետությունը պետք է ապահովի կրթություն ստանալու նրանց իրավունքը»

համայնքում վաղ ամուսնությունների հիմնախնդրի առկայությունը շարունակում է գլխավորապես պայմանավորված լինել իրավակիրառ պրակտիկայում առկա թերացումներով և խնդիրներով, սակայն այն նաև իրավական մշակույթի խնդիր է, որն առկա է թե՛ եզդիական համայնքի, թե՛ որոշում կայացնող պետական մարմինների և պաշտոնյաների շրջանում: Որպես հետևանք շարունակում է տիրապետող լինել այն մոտեցումը, որ վաղ ամուսնությունները դրանք եզդիական համայնքի «ազգային ավանդույթներն» են և ոչ թե իրավունքների ոտնահարման հանգեցնող ձևավորված բացասական պրակտիկա:

Այս մոտցումը նույն շեշտադրումներով տեղ է գտնում նաև բազմաթիվ մեդիա հրապարակումներում, երբ եզդի եղջիկների շրջանում դրսևորվող վաղ ամուսնությունների և կրթությունից դուրս մնալու բացասական պրակտիկան կամ վնասակար մշակութային սովորույթները լրատվամիջոցների կողմից ներկայացվում են իբրև եզդիական ազգային ավանդույթներ: Այդպիսի մոտեցումը նպաստում է, որ վնասակար պրակտիկաները ավանդույթի անվան ներքո գերիշխեն իրավունքի և օրենքի նկատմամբ: Մինչդեռ միջազգային իրավունքը սահմանում է, որ թեև մշակութի և ավանդույթի դերը մեծ է, սակայն հակասությունների դեպքում առաջնահերթությունը պետք է տրվի մարդու իրավունքներին:

Իհարկե, եզդիական համայնքի շատ ներկայացուցիչներ, իրենք են առաջինը խոսել այս երևույթի մասին՝ ներկայացնելով այն որպես ազգային ավանդույթ, որն էլ պատճառ է հանդիսացել լրատվամիջոցներում այս կարծրատիպի տարածման: Իսկ համայնքի որոշ անդամների

կողմից վաղ ամուսնությունը եզդիական ավանդույթ ներկայացնելն ուներ մեկ նպատակ. ստիպել իրավապահ մարմիններին և պատկան կառույցներին չխառնվել այդ «ավանդույթներին» և խուսափել կանխարգելող օրենքների կիրառումից: Այսպես, շղթայական՝ ***համայնք-լրատվամիջոցներ-համայնք*** կապի միջոցով տարածվեց այս երևույթն որպես «եզդիական ազգային ավանդույթ»: Իրականությունը, սակայն այն է, որ նման ավանդույթ եզդիական համայնքն երբևէ չի ունեցել և չունի:

Այս իմաստով կարևոր է, որ մեդիան, խոսելով այս հիմանխնդրի մասին, լուսաբանումներ անելիս նպաստի այս խոսույթների փոփոխությանը, և որ եզդի աղջիկների շրջանում վաղ ամուսնությունները դրանք ոչ թե ավանդույթներ են, այլ բացասական պրակտիկա:

## Թեմա 2.2 Մշակութային, կրոնական և կենցաղ-զբաղմունքային կյանքի մասին միֆերի ստեղծումն ու տարածումը լրատվամիջոցներով

Եզդիական կրոնի մասին տարածված շատ միֆեր և ապատեղեկատվություններ կան: Մեդիայում ևս դրանք շատ են. շատ լրատցամիջոցներ եզդիներին որպես առանձին կրոն ունեցող էթնիկ խումբ նկարագրելիս, անվանում են *արևապաշտներ*: Մեդիայի կողմից հնարված և տարածվող միֆերի շրջանում է նաև այն, որ եզդիներն անկողին են պաշտում: Կամ, չիմանալով, թե սիրամարգը ինչ խորհուրդ ունի եզդիական կրոնում, գրում են, որ եզդիները սիրամարգին են պաշտում, կամ դա նրանց Աստծո կերպարն

է: Իսկ, իրականում, այս ամենը բացարձակ այլ մեկնաբանություն ունի: Ռեպորտաժներում հաճախ կարելի է մի պատկերի հանդիպել, երբ ազգությամբ եզդին, ում տանը տեսանկարահանում են սիրամարգ և քրիստոնեական սրբապատկերներ միաժամանակ՝ կողք կողքի, խոսում է եզդիական ավանդույթներից և կրոնից, աղավաղելով եզդիական կրոնի մասին պատկերացումները[50]: Այսօր, ցավոք սրտի, ապրելով հայ քրիստոնյաների մեջ և հարաբերվելով նաև հայերի կրոնի հետ, շատ եզդիներ քրիստոնյա են դարձել՝ չհրաժարվելով եզդի ազգությունից: Լրատվամիջոցի աչքից էլ այս պատկերները չեն վրիպում, արդյունքում՝ հեռուստադիտողը, ով տեսնում է ազգությամբ եզդի մարդու, ում թիկունքում քրիստոնեական սրբապատկերներ են, սկսում է մտածել, որ եզդիները ևս քրիստոնյա են[51]:

---

[50] https://www.youtube.com Երկու ազգ ու մեկ հայրենիք. եզդիների կյանքը Հայաստանում, Tsayg.am

[51] https://www.azatutyun.am «Դարը փոխվեց». եզդիական համայնքում կարծրատիպեր են կոտրվել




** «Ազատություն» և «Ցայգ» լրատվամիջոցների կադրերը, որոնցում աղավաղվում են եզդիական կրոնի մասին պատկերացումները և որոնցով ստեղծվում են եզդիական կրոնի մասին միֆեր*

Սակայն եզդիական կրոնի շուրջ մեծ աղմուկ բարձրացավ դեռևս տարիներ առաջ, երբ Տեր Եսայի քահանայի կողմից եզդիներին սատանայապաշտ որակելու հրապարակումներ հայտնվեցին. «*Եզդին արևապաշտ է: Եզդիական սրբավայր մտնելիս տեսնում ենք սատանայի արձանը: Նրանք ոչ թե հավատում են սատանային, այլ խնդրում են սատանայից, որ նա չվնասի իրենց*»[52]:

[52] https://armlur.am Նոր սկանդալ է հասունանում եզդիների և հայ քահանայի միջև. ինչո՞ւ է լռում առաքելական եկեղեցին. «ՉԻ»

Հոգևորականի խոսքը եզդիական կրոնական համակարգում գլխավոր սիմվոլներից մեկի՝ Տաուսե Մալաք հրեշտակապետի կերպարի՝ սիրամարգ-հրեշտակի խորհրդանիշի մասին է, որը ոչ մի կապ չունի սատանայի հետ: Հոգևորականի խոսքը շրջանառվեց գրեթե բոլոր լրատվամիջոցներում, ինչն էլ հիմք հանդիսացավ, որ շատ եզդիներ վրդովվեն և պահանջեն քահանայից ներեղություն խնդրել կրոնական սխալ տեղեկություններ փոխանցելու համար[53]:

Հարկ է նշել, որ եզդիների արևապաշտ լինելու մասին խոսույթը Հայաստանում տարածվել է, ցավոք, հենց ազգությամբ եզդի որոշ գործիչների շնորհիվ, իսկ իբր սատանայապաշտ լինելն ավելի հին մոլորություն է՝ շրջանառված դեռևս մահմեդական աղբյուրներում և Իսլամական Պետության ահաբեկիչների կողմից, ովքեր կոտորում էին Իրաքի եզդիներին՝ նրանց համարելով սատանայապաշտ, որն էլ ցավոք տեղ գտավ ՁԼՄ-ներում և տարածվեց:

Իրականում եզդիների կրոնը հստակորեն միաստվածական դավանական համակարգ է, իսկ սատանային չհայհոյելը, դրա ուշադրությունն անտեղի չհրավիրելը կամ անվան հիշատակումից խուսափելը կա նաև հայկական ժողովրդական հավատալիքներում:

---

[53] https://168.am Հայ առաքելական եկեղեցու հոգևորականը վիրավորում է եզդիներին

*Լրատվամիջոցների դերը եզդիական կրոնի մեկնաբանման գործում այն բացառապես գիտակ հոգևորական եզդիների միջոցով ներկայացնելն է:*

Ինչ մնում է «անկողնու պաշտամունք» ասվածին (*անկողինը նրանց համար պաշտամունք է եւ օջախի խորհուրդն ունի*[54]), հարկ է նշել, որ այն ևս չափազանցված խոսույթ է: Եզդիներն անկողին չեն պաշտում: Ծալքերով անկողինները կարված ոչխարի բրդից, գրեթե բոլոր եզդիների տան անկյունում կարելի է հանդիպել: Ըստ եզդիական հավատալիքների՝ այդ անկողնու ծալքերում ապրում է տան հովանավոր հրեշտակը, որը սուրբ է համարվում:

*Լրավամիջոցների խնդիրն է չչափազանցնել այն՝ ներկայացնելով որպես «պաշտամունք»:*

## Կարծրատիպերի ստեղծում և սխալ մեկնաբանություններ եզդիների կենցաղի, մշակույթի մասին պատմող մեդիանյութերում.

Քանի որ մեր հետազոտության առարկան եզդիական համայնքի մասին ստեղծված կարծրատիպերն են, հասկանանք, թե դրանք հիմնականում ի՞նչ բնույթ են կրում: Առօրեական գիտակցության մեջ և զանգվածային հաղորդակցության միջոցներում եզդիների մասին ազգային կարծրատիպերը հիմնականում բացասական են և նախապաշարմունքային, շատ հաճախ խեղաթյուրված: Հաճախ մեկնաբանում են, որ դրանք պատմականորեն

[54] https://armenpress.am Արարատի մարզի եզդիները նշեցին Խդրնավին

ձևավորվել են եզդիական համայնքի՝ փակ կրոնական համայնք լինելու պատճառով: Որպես պատճառ նշվում է նաև այն, որ եզդիական համայնքը նախաձեռնողականություն չի ցուցաբերել իր համայնքը ճշգրիտ ներկայացնելու կամ համայնքի ներկայացուցիչները՝ իրենք, բավարար չափով չեն ճանաչել իրենց ազգը, ազգային սովորույթները, կենցաղային բնույթը, մշակույթը կամ կրոնը:

Բացասական կարծրատիպերի տարածման հրապարակումների շարքում առանձնակի ուշադրություն ու աղմուկ բարձացրեց դեռևս տարիներ առաջ ՀՀԿ նախկին պատգամավոր Մանվել Բաղեյանի կողմից լրագրողների ուղղությամբ նետած խտրական՝ «**Որ փողոցում կանգնած մի եզդի էդ հարցը տար, կզարմանայի...հո դուք եզդի չե՞ք**»[55] արտահայտությունը՝ ակնարկ անելով լրագրողների կողմից իր մտքերը դժվար հասկանալը:

Եզդիների մասին այսպիսի կարծրատիպերի ձևավորման գլխավոր պատճառը հենց այն է, որ Հայաստանյան մեդիան տարիներ շարունակ որդեգրել է մի քաղաքականություն, երբ եզդիական համայնքում դրսևորվող վաղ ամուսնությունների բացասական պրակտիկան ներկայացնում է որպես *«ազգային ավանդույթ»,* կրթությունից դուրս մնալը՝ իրավունքների խախտման փոխարեն՝ *«կրթվելու ցանկության բացակայություն»,* ազգային զբաղվածությունն և հետաքրքրությունը՝ միայն *«անասնապահություն»*, եզդիներին էլ՝ *«բնատուր հովիվներ»*[56]*:*

---

[55] https://www.aravot.am Մանվել Բաղեյանը՝ լրագրողներին. «Արա հո դուք գիժ չեք, արա»

[56] https://armeniasputnik.am Արագածից մինչև Արարատ. ազգ, որը հայերի չափ սիրում է հայոց լեռները

Հարկ է նշել, որ հայկական մեդիայում ազգային փոքրամասնությունների մասին հիմնական տարածվող կարծրատիպերը տարածվում են հենց բացասական լույսի ներքո: Իհարկե, հնարավոր չէ հստակ ասել, թե ո՞րն է պատճառը՝ միտումնավո՞ր կերպով, միամտորե՞ն, թե չիմացության արդյունքում է ստեղծվում նման մեդիա-արտադրանք:

Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրության արժանացավ Ազատություն ռադիոկայանի բավականին վերջերս հրապարակված մի տեսանյութ եզդիական համայնքներից մեկի մասին: Տեսանյութում ներկայացվող ինֆորմացիան մեծ մասամբ ապատեղեկատվություն էր և եզդիական ազգային արժեքների հակաքարոզ[57]: Եզդիական կրոնի, կենցաղի և մշակույթի մասին թյուր մեկնա-բանությունները ավելի են արմատավորում եզդիական համայնքի մասին կարծրատիպերը: Նյութի հեղինակը այնպիսի հերոսների էր ընտրել տեսանյութի համար, որոնք ոչ միայն չեն տիրապետում իրենց կրոնի ու մշակույթի մասին ճշգրիտ ինֆորմացիային, այլև նպաստում են եզդիական դավանանքի մասին աղավաղված պատկերացումների տարածմանը: Առաջին հարցը, որը արժեր տալ այդ նյութի հերոսներին և պարզապես չշարունակել զրույցը, այն է, թե Մալաքե Տաուսի խորհրդանիշ սիրամարգի կողքին ինչու՞ են դրված քրիստոնեական սրբապատկերներ: Այդ մեկ պատկերով կարելի էր հասկանալ, որ գործ ունենք իրենց

[57] https://www.azatutyun.am «Դարը փոխվեց». եզդիական համայնքում կարծրատիպեր են կոտրվել

ազգային և կրոնական ինքնությունից խորքային գիտելիք չունեցող անձանց հետ:

Ներկայացնենք նյութում տեղ գտած հիմնական արտահայտությունները.

*«Ոչխարի բրդից կարված անկողինները, որ նախկինում պարտադիր էր տանն ունենալ հատուկ հյուրերի համար՝ անգամ իբրև սուրբ անկյուն, էլ չունեն: Միայն հոգևոր առաջնորդների տներում կհանդիպես»:*

Իրականում, ոչխարի բրդից կարված անկողինը, որը եզդիներն անվանում են ստեռ, ոչ թե նախատեսված է հատուկ հյուրերի համար, այլ կրոնով բացարձակ այլ նշանակություն ունի. Ստեռը յուրաքանչյուր եզդիի տան պահապան հրեշտակի համար է նախատեսված: Տան պահապան հրեշտակը, ըստ եզդիական կրոնի, ապրում է այդ անկողնու ծալքերում: Սա կրոնական մեկնությունն է: Եվ նյութում հնչող խոսքն առ այն, որ տեռը միայն հոգևոր առաջնորդների տանը կարելի հանդիպել, կեղծ տեղեկություն է, քանզի եզդիական հավատալիքներին և կրոնին հավատարիմ յուրաքանչյուր եզդի մարդու տանը կարելի է հանդիպել նման անկողնու:

Հաջորդ թյուր մեկնաբանությունը նյութում այն է, որ եզդիներն այսօր կարողանում են ամուսնանալ մեկ այլ ազգի ներկայացուցչի հետ, և դա ընդունվում է: Նման դեպքերը, որքան էլ թվով մեծ չլինեն, բայց, այո, պատահում են, իսկ եզդիական կրոնը և կրոնական համայնքը չի ընդունում խառն ամուսնությունները՝ համարելով այն ազգային դիմագծի պահպանման որոշակի ձև: Այն, որ այդ երևույթը ընդունելի է

եզդիական համայնքի կողմից, իրականությանը չի համապատասխանում:

*Բայց հագուկապի, կենցաղի ու ավանդույթների պարտադրանքներից կարողանում են հրաժարվել,*- ասվում է նյութում:

Այս և այլ բոնորոշումները, որոնք օգտագործվել են նյութում, միանշանակ չեն ու վիճելի կարող են լինել եզդիական համայնքի ներկայացուցիչների համար:

*Լրագրողի սխալը և թերացումը այն է, որ նախքան եզդիական համայնք այցելելը վերջինս չի տիրապետել եզդիական համայնքի մասին թեկուզ մինիմալ ինֆորմացիայի, որի լինելիության պարագայում հնարավոր կլիներ խուսափել նման արտահայտություններ անելուց և հերոսներ ընտրելու հարցում ավելի աչալուրջ կլիներ, հատկապես, երբ դու, որպես լրագրող խոսելու ես եզդիական կրոնական և մշակութային մի շարք առանձնահատկությունների մասին:*

*Առանց այդ էլ հայկական մեդիան տարիներ շարունակ նմանատիպ մարդկանց միջոցով արտադրել և լսարանին փոխանցել է չափազանցված ստերեոտիպներ ազգային փոքրամասնությունների մասին: Մեկ այդպիսի մարդու պատճառով պատկերացում է կազմվում ողջ համայնքի մասին:*

Հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն էին գրավում Հետք-ի տարբեր հոդվածներում հանդիպող կարծրատիպային արտահայտությունները, որոնցից որոշները ներկայացնում ենք ստորև.

«Եզդի կանայք փորձում են կոտրել կարծրատիպեր» նյութում նշվում է. *«Ամուսնացել է 20 տարեկանում՝ 2000թ.-ին,* ***եզդիական ավանդույթների համաձայն****: Միակ* ***ժամանակակից տարրը*** *եղել է այն, որ հարսի սպիտակ զգեստ է կրել»*[58]*:*

Վաղ տարիքում ամուսնությունը, ևս մեկ անգամ նշենք, եզդիական ավանդույթների հետ կապ չունի: *«ժամանակակից տարր»* որոշիչի օգտագործումն ընթերցողի մոտ ստեղծում է այն տպավորությունը, որ եզդիական համայնքը իր ավանդույթներով հանդերձ հեռու է ժամանակակից աշխարհից: Այսպիսի արտահայտու-թյունները խտրականացնում են տվյալ համայնքին:

Կանանց նկատմամբ կրոնով և ավանդույթներով հիմնավորված ինչ-որ արգելքների ու կանոնների ևս հանդիպում ենք որոշ հոդվածներում, օրինակ՝ *«Ես կանոնները, կրոնը չեմ խախտելու, առանց այդ էլ մազ եմ կտրում, ներկում, հոնք եմ հանում, կոսմետիկա եմ օգտագործում, դա ինձ համար մեղք ա»,-* ասում է Զոզանը[59]:

*«Կինը առանց ամուսնու թույլտվության կոսմետիկա չի կարող օգտագործել, միայնակ առեւտուր անելու չի կարող գնալ, կինը կենաց չի կարող ասել, սկեսրայրի ներկայությամբ*

---

58 https://hetq.am Եզդի կանայք փորձում են կոտրել կարծրատիպեր

59 https://hetq.am Եզդի կանայք փորձում են կոտրել կարծրատիպեր

*խոսել չի կարող, առանց ամուսնու թույլտվության սովորել ու աշխատել չի կարող...»,* - պատմում է հարսանիքին ներկա 38-ամյա Լիլյան[60]:

Նյութի հերոսի միջոցով փոխանցված այս «օրենքները» եզդիական ոչ մի դավլում[61] չես գտնի, հետևաբար դրանք ո՛չ կրոնական արգելք, ո՛չ էլ ազգային ավանդույթ համարվել չեն կարող: Տարբեր հերոսների միջոցով մեդիայով նման գաղափարների տարածումը ևս թյուր կարծրատիպերի ստեղծման շարքին են պատկանում և հանրության շրջանում ստեղծում են այն համոզմունքը, որ եզդի կինը իրավազուրկ է եզդիական համայնքում, և դա նորմալ է:

Մեդիայով տարածվող միֆերից անմասն չմնաց նաև եզդիական հարսանիքների արարողակարգը: Շրջանառվող հիմնական միֆը հարսանիքի ժամանակ փեսացուի կողմից հարսի ուղղությամբ նետված խնձորն է:

## Փեսան խնձորով խփում է հարսին, որ վերջինս հպատակվի. եզդիական հարսանիք Ալագյազ գյուղում[62]

*«Անդրադառնալով հարսի ուղղությամբ նետվող երեք խնձորների նշանակությանը, Զինան պատմում է. «Ինչու՞ երեք խնձոր: Ադամը երեք անգամ ասաց Եվային՝ խնձոր մի կեր, մենք պետք է երկար ապրենք, Եվան չլսեց Ադամին, կերավ խնձորը, որն էլ նրա գլխին պատուհաս դարձավ:*

---

60 https://hetq.am Եզդի կնոջ կյանք. ադաթի ու պատվի անփոխարինելիությունը

61 Դավլերը եզդիական կրոնական օրհներգերը, հիմները և աղոթքներն են

62 https://hetq.am Փեսան խնձորով խփում է հարսին, որ վերջինս հպատակվի.եզդիական հարսանիք Ալագյազ գյուղում

*Փեսան խնձորով խփում է հարսին, որ վերջինս հպատակվի: Վախեցնում է, որ Ադամի Եվայի պատմությունը չկրկնվի»:*

**Ինչո՞ւ են եզդիները խնձորով խփում հարսի գլխին**[63]

*«Իմ հարցին, թե ինչո՞ւ են հարսանեկան արարողության ժամանակ խնձոր նետում հարսի գլխին կամ բերքատու ծառը թափ տալիս հարսի վրա, տիկին Սեդան ժպիտով պատասխանեց. «Խնձորը խորհրդանշում է առողջ եւ գեղեցիկ երեխայի ծնունդը, իսկ բերքատու ծառը՝ նորապսակների՝ ծառի նման բերքատու լինելը»:*

**Եզդի աղջիկները դատապարտված են վաղ ամուսնության**[64]

*«Նախքան իր տուն մտնելը, Օմարը պետք է բարձրանա կտուրն ու Սոնայի գլխին կարմիր խնձորներ շպրտի: Այս ավանդույթը ամուսնական կյանքի քաղցրության ու կնոջ հնազանդության նշանն է»:*

Այս հոդվածներում եզդիական հարսանիքի այդ արարողակարգի մասին բերվում են տարբեր վարկածներ, որոնցից ոչ մեկը մոտ չէ իրականությանը: Առաջինի դեպքում մտքի հեղինակը հերոսն է, ով չգիտի այս երևույթի իրական բացատրությունը, երկրորդի դեպքում միտքը հեղինակինն է և պարզ չէ, թե որտեղից է այն վերցված, գուցե կրկին հերոսներն են տվել դրա բացատրությունը:

Այս արարողակարգի մասին նմանատիպ մեկնաբանու-թյունները մեդիայում բազմաթիվ են:

---

[63] https://www.aravot.am Ինչո՞ւ են եզդիները խնձորով խփում հարսի գլխին

[64] https://hetq.am Եզդի աղջիկները դատապարտված են վաղ ամուսնության

Իրականում, եզդիների ազգային ծեսերի մեջ հարսանեկան ծեսի արարողությունը խորիմաստ է և գեղեցիկ: Սակայն քննարկումների թեմա է հարսանիքի ժամանակ հարսանացուի կողմը նետված խնձորը, որը բացարձակ այլ նշանակություն ունի իրականում: Այս գեղեցիկ ծեսը գալիս է դարերի խորքից: Դեռևս շատ վաղ ժամանակներում, երբ երիտասարդ տղային խնդրում էին ցույց տալ իր ընտրյալի տունը, տղան այդ տան ուղղությամբ խնձոր էր գլորում: Իսկ հարսանիքի ժամանակ փեսան ոչ թե հարվածում, այլ նետում է խնձորը հարսի ուղղությամբ՝ բազմության միջից ցույց տալով իր սիրեցյալին[65]:

Առավոտի օրաթերթի կայքում՝ **Ինչո՞ւ են եզդիները խնձորով խփում հարսի գլխին հոդվածում**, նշվում է. *«Եզդի ժողովուրդը միշտ աչքի է ընկել իր սովորույթներով: Եզդի ասելով՝ ակամա պատկերացնում ենք մարդկանց, որոնք զբաղվում են ոչխարաբուծությամբ կամ հողագործությամբ: Բայց պետք է նշել, որ կան նաեւ եզդիներ, որոնք երկար ժամանակ ապրելով քաղաքում՝ ստանալով բարձրագույն կրթություն, տարբերվում են իրենց հայրենակիցներից, բայց դա նրանց չի խանգարում պահպանել ազգայինը, ավանդույթներն ու սովորույթները»*[66]:

Նման բնութագրումներ եզդիներին տվել է նաև *Սպուտնիկ Արմենիա կայքը*, որի նյութերից մեկի հենց սկզբում նշվում է.

---

[65] Ձեռնարկ Հայաստանի եզդիաբնակ համայնքներում ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համար, Մարդու իրավունքների եզդիական կենտրոն, 2020, Երևան

[66] https://www.aravot.am Ինչո՞ւ են եզդիները խնձորով խփում հարսի գլխին հոդվածում

*«Եզդիները Հայաստանում հայտնի են իբրև բնատուր հովիվներ»*[67]*:*

Մեդիայում տեղ գտնող այսպիսի արտահայտությունները մեծ առումով արտահայտում են հանրության լայն շերտերի վերաբերմունքն ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդիների նկատմամբ:
Թերևս, հարկ է ընդգծել, որ *«ոչխարապահ»* եզդու կերպարը դեռևս 2000-ականներից սկսեց արմատավորվել հեռուստա-տեսությամբ, երբ դերասան Աշոտ Ղազարյանը իր մանրապատումներում սկսեց օգտագործել եզդու կերպարը՝ ներկայացնելով այն միայն ոչխարահապությամբ զբաղվողի:

Կրթությունը չկարևորող, չկրթված եզդու մասին կարծրատիպերի տարածմանը նպաստել են նաև ազգությամբ եզդի տարբեր անհատներ, տարբեր եզդի հասարակական-քաղաքական գործիչներ, որոնք տարբեր մեդիա հրապարակումներում նպաստել են նմանատիպ խոսույթների տարածմանը:

*«Եզդիների՝ հիմնականում անասնապահությամբ զբաղվելու եւ մյուս ոլորտներում ընդգրկվածության բացակայության պատճառը ՀՀ վաստակավոր լրագրող եւ Հանրային ռադիոյի եզդիերեն հաղորդումների բաժնի վարիչ Հասան Թամոյանը համարում է ազգային դիմագիծը չկորցնելու ձեւ:*
*«Եզդիները կրթության նկատմամբ անտարբեր են եղել հիմնականում: Նրանց պապենական զբաղմունքը անասնա-պահությունն է: Շատ հետաքրքիր փաստ է. երբ*

---

67 https://armeniasputnik.am Արագածից մինչև Արարատ. ազգ, որը հայերի չափ սիրում է հայոց լեռները

*քաղաքաբնակ վայրում ենք, կարծես թե շատ շուտ կորցնում ենք մեր ազգային դիմագիծը: Իսկ երբ մեկուսանում ենք, հեռու ենք մնում ոչ եզդիական միջավայրից, զբաղվում ենք մեր պապենական զբաղմունքով, նորից վերագտնում ենք մեր ազգայինը»,- ասում է նա»*[68]:

Լրատվամիջոցներում հաճախ ենք հանդիպում նաև կաղապարային արտահայտությունների, պատկերների, որոնք ամեն անգամ օգտագործվում են ինչ-որ հասարակական խմբի նկարագրելիս: Դրանցից բացառություն չեն կազմում նաև ազգային փոքրմասնություններին վերբերող նյութերը: Օրինակ՝ եզդիների վերաբերյալ վավերագրան ֆիլմում, ռեպորտաժում կամ հոդվածում հաճախ հանդիպում ենք ոչխարի հոտի կամ նմանատիպ մտացված-բեմականացված կադրեր, կամ մոլոկանների մասին նյութում գլխավոր պատկերող նկարը կին է՝ կով կթելով կամ թթու վաճառելով: Սրանք այնքան քարացած կարծրատիպեր են, որոնք խորը արմատներ են գցել հասարակության գիտակցությունում և ամեն անգամ ամրապնդվում են ԶԼՄ-ներում նմանատիպ նյութերի հրապարակումներով:

Այս նյութերում հատուկ ընտրված լուսանկարներ են, որ միտում ունեն ցույց տալու, թե իբր եզդին, ավանդապես պետք է զբաղվի ոչխարապահությամբ, կամ նման կերպ փորձել ցույց տալ եզդի կնոջ սխալ կերպար:

---

68 https://hetq.am Եզդի կնոջ կյանք. «ադաթի» ու պատվի անփոխարինելիությունը

**Մի քանի լրատվամիջոցներից առանձնացված կադրեր, որոնք ստեղծում են կարծրատիպեր եզդիների կենցաղ-զբաղմունքային կյանքի մասին*

Հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն գրավեց մեծ լսարան գրաված մի աղմկահարույց դեպքի առնչությամբ արված հրապարակում այն մասին, երբ ազգությամբ եզդի տղամարդը փորձել էր սպանել հորեղբոր աղջկան՝ «պատվի համար»[69]: Իրականում, գուցե այս դեպքը հանրային օրակարգի ուշադրությունում չհայտնվեր, եթե

[69]https://www.1in.am Թասիբն ընդդեմ իրավունքի. ինչու է ազգությամբ եզդի եղբայրը քրոջը դաժանաբար սպանելու փորձ արել

լրատվամիջոցները այս դեպքը չմանիպուլացնեին այն լույսի ներքո, որ եզդիական համայնքը այս դեպքը ընդունում է իբրև հարգանքի արժանի արարք, և չներկայացնեին այնպես, իբրև կնոջը նամուսի համար տղամարդու կողմից ծեծելը կամ սպանելը դա եզդիական ադաթ է կամ պատվի հարց:

Տեսանյութում դեպքի մասին խոսող հերոսները ոչ միայն չեն դատապարտում հանցագործության արարքը, այլ վերագրում են դա *եզդիական օրենքին*: Թե ինչպիսի՞ օրենքի մասին է խոսքը, հայտնի չէ: Տվյալ անձինք, ամենայն հավանա-կանությամբ, նկատի ունեն կրոնական օրենքները: Սակայն, եզդիական կրոնական ոչ մի օրենք չի սահմանում կնոջ հանդեպ բռնությունը որպես նամուսի և պատվի գործ:

Նյութում մեծահասակ տղամարդկանցից մեկն ասում է, որ *«նամուսի ու թասիբի տեսանկյունից»* երիտասարդը ճիշտ է գործել:

*«Մեր եզդիների օրենքում ընդունված չէ կնոջ կողմից անբարոյականությունը, մեր երիտասարդը ճիշտ է գործել»,-* ասում է համայնքի տարեց կանանից մեկը:

Նյութում և ոչ մի կարծիք չկա որևէ իրավապաշտպանից, կամ քիչ թե շատ եզդիական կրոնից և ավանդույթներից քաջատեղյակ եզդիական համայնքի ներկայացուցչից: Նման պարզաբանող մեկ կարծիքի առկայության դեպքում չէր խեղաթյուրվի եզդիական համայնքի նկատմամբ կարծիքը, չէր ստեղծվի այնպիսի տպավորություն, որ այս համայնքը դրական է համարում կնոջ նկատմամբ գործադրված բռնությունը:

Նմանատիպ հրապարակումներում հարկ է պահպանել բազմակողմանիությունը, որպեսզի նյութում խոսացող մեկ անձի սուբյեկտիվ ընկալումն ու կարծիքը չներկայացվի որպես եզդի համայնքի կարծիք և համայնքին չվերագրվեն բացասական ավադույթներ կամ սովորույթներ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Հանրային Հեռուստաընկերությանը, Հանրային Ռադիոյին, Հեռուստառադիոընկերության խորհրդին

- Ազգային փոքրամասնությունների ինքնությանն ու խնդիրներին վերաբերվող լրագրողական նյութեր ստեղծելիս ընդգրկել ազգային փոքրամասնու-թյուններին նյութերի պատրաստման գործընթացում

- Ազգային փոքրամասնությունների անմիջական մասնակցությամբ, միջազգային կազմակերպու-թյունների խորհրդատվությամբ ստեղծել հայեցակարգ ազգային փոքրամասնությունների իրավունքների բարձրաձայնման, խնդիրները լուսաբանելու համար

- Լուսաբանել ազգային փոքրամասնությունների խնդիրները, այդ թվում՝ հարթակ տրամադրելով այն անձանց ու կազմակերպություններին, որոնք համաձայն չեն կառավարության կամ իշխա-նությունների տեսակետի հետ

## Մարդու իրավունքների պաշտպանին

- Պետական լրավամիջոցների հետ աշխատանքում կարևորել նրանց ազդեցությունը ազգային փոքրա-մասնությունների իրավունքների վրա
- Մշակել կրթական մոդուլներ ազգային փոքրամասնությունների համար՝ նրանց իրա-

վունքների և նրանց՝ մեդիա տիրույթում արդյունավետ մասնակցության վերաբերյալ

**Հասարակական Կազմակերպություններին**

- Ազգային փոքրամասնությունների համար իրա-կանացնել տեղեկատվական բնույթի արշավներ նրանց մեդիա մասնակցության խթանման նպա-*տակով

**Միջազգային կազմակերպություններին**

- Պետության հետ շփումներով կարևորել ազգային փոքրամասնությունների համար բարենպաստ մեդիա միջավայրի ստեղծումը: Տեղայնացնել տեղեկատվական մոդուլները մեդիա ազատու-թյունների վերաբերյալ հայերենով և ազգային փոքրամասնությունների լեզուներով

**Լրատվամիջոցներին**

- Հետևել ազգային փոքրամասնությունենրի խնդիրների լուսաբանման միջազգային ստանդարտներին և շարունակականորեն լրագրողներին ծանոթացնել ոլորտային էթիկայի կանոնակարգերին

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

## Խորհուրդներ լրագրողներին և լրատվամիջոցներին

Թվարկելով հայկական մեդիայով ազգային փոքրամսնությոններին լուսաբանելու ընթացքում թույլ տված սխալները, կարծատիպերի ստեղծումն ու տարածումը, կրոնի, մշակույթի, ավանդույթների միտումնավոր կամ ոչ միտումնավոր սխալ մեկնաբանությունները, վերջիններիս ունեցած խնդիրների ոչ պատշաճ լուսաբանման պրակտիկան, ևս մեկ անգամ հանգում ենք ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացություններին[70]:

Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսևորումները բացառելու և հանդուրժողականություն ապահովելու համար անհրաժեշտ է առաջինը հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ:

Հայաստանի լրատվամիջոցներում խտրական, նախապաշարված, հաճախ էլ կողմնակալ լուսաբանման դեպքերը հատկապես դրսևորվում են կրոնական, սեռական կողմնորոշման, քաղաքական հայացքների, մասամբ՝ սոցիալական կարգավիճակի, սեռային, տարիքային հայտանիշներով: Սոցիալական տարբեր խոցելի խմբերին, ընդ որում՝ ազգային փոքրամասնություններին վերաբերող թեմաների լուսաբանումները հիմնականում խղճահարություն, երբեմն էլ արհամարհանք առաջացնելու համատեքստում են լինում, ինչը նույնպես խտրականության դրսևորման մի ձև է:

---

[70] https://ypc.am ՈՒՂԵՑՈՒՅՑ Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսեւորումները բացառելու եւ հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ

Հաշվի առնելով վերոգրյալները, նկատի ունենալով, որ մեդիան նաև հասարակությանը կրթելու, կարծրատիպերը ջարդելու և հանդուրժողականության միջազգային չափանիշներ արմատավորելու խնդիր ունի, առանձնացնենք կարևոր մի քանի խորհուրդներ.

- Լրագրողներն ու լրատվամիջոցները ազգային փոքրամասնությունների համայնքների, կազմակերպությունների, միավորումների հետ հարաբերություններում և նրանց վերաբերող լուսաբանումներում պիտի առաջնորդվեն համընդհանուր էթիկական սկզբունքներով:

- Կրոնական, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր խմբերի վերաբերող թեմաներ արծարծելիս շատ կարևոր են այդ խմբերի ներկայացուցիչների և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ հարցազրույցներն ու բոլորի դիրքորոշումները հրապարակումներում ներկայացնելը: Խորհուրդ է տրվում մանրամասն քննարկել խնդիրներն այդ խմբերի կամ հասարակական կազմակերպությունների հետ:

- Հարկ է հիշել, որ ցանկացած ազգային, կրոնական համայնք, սոցիալական խումբ միայն արտաքուստ է միասնական, հնարավոր է լինեն մարդիկ, որոնք չեն կիսում համայնքի/կազմակերպության ղեկավարության տեսակետները: Աշխատեք ստանալ դրանք, բայց այդ տեսակետները ներկայացնելը մի գործածեք համայնքը/կազմակերպությունը վարկաբեկելու համար:

- Նյութեր հավաքելիս հարկ է գնահատել բոլոր հնարավոր կանխակալ կարծիքները: Հիշեք, որ այս կամ այն խմբի մասին մի այլ խմբի կարծիքը մեծ մասամբ հիմնվում է ոչ թե փաստերի, այլ նախապաշարումների, կանխակալության և կարծրատիպերի վրա:

- Հարցազրույց վարելիս եղեք նրբանկատ: Հիշեք, որ տարբեր սոցիալական խմբերի, կրոնական կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են խուսափել կամ խուճապի մատնվել լրագրողի հետ զրուցելիս: Խորհուրդ է տրվում զրույցը չսկսել նրանց հուզող խնդիրներից: Խոսեք ընտանիքի, կյանքի, նախասիրությունների մասին, լիցքաթափեք զրուցակցի լարվածությունը, վստահություն ձեռք բերեք, ապա անցեք բուն թեմային:

- Մի աղավաղեք ձեր զրուցակիցների տեսակետները, համատեքստից մի կտրեք նրանց մտքերը: Հիշեք, որ ցանկացած անզգույշ բառ կամ դարձվածք կարող է հանգեցնել վստահության կորստի և ընկալվել իբրև խտրականություն կամ հրահրել բախումներ ու վեճեր: Մի մոռացեք, որ ազգային փոքրամասնությունները ևս խոցելի և թիրախային խումբ են:

- Ուշադրություն դարձրեք այլ դավանանքի, ազգի ներկայացուցիչ, սոցիալական կարգավիճակ ունեցող մարդկանց բնորոշելու համար ձեր օգտագործած բառապաշարին: Հնարավոր է, որ որոշ բառեր դուք

նսեմացուցիչ չհամարեք, սակայն դրանց կիրառումը վիրավորական թվա տվյալ խմբի անդամների համար: Ավելի լավ է իրենցից կամ նրանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներից ճշտել որոշ բառերի գործածությունը:

- Որևէ համայնքի կամ խմբի մեկ կամ մի քանի անդամի վարքով մի դատեք ամբողջ համայնքի մասին: «Բոլորը» չեն կարող միանման լինել, յուրաքանչյուր մարդ անհատականություն է:

- Անհարկի մի շեշտեք մարդու՝ կրոնական որևէ համայնքի անդամ լինելը, ազգային պատկանելությունը: Մարդու ազգային, կրոնական կամ այլ պատկանելությունը կարելի է նշել միայն այն դեպքում, երբ իրադարձությունը, փաստը կամ միջադեպը ունի կրոնական, ազգային, քաղաքական, սոցիալական հիմք:

- Խուսափեք մակդիրներ, բնորոշումներ, կարծրատիպեր օգտագործելուց:

- Խտրականության ենթարկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին լուսաբանելիս մի փորձեք խղճահարություն առաջացնել: Զերծ եղեք կարծրատիպերից և կանխակալությունից:

- Աշխատեք նյութի մեջ չտեղադրել այնպիսի լուսանկարներ, որոնք կծառայեն տվյալ խմբի վերաբերյալ կարծրատիպերի խորացմանը:

- Եթե որևէ համայնքի, սոցիալական խմբի նկատմամբ խտրական վերաբերմունքը կամ անհանդուր-ժողականությունը դրսևորվել է հրապարակային ելույթում կամ գործողությամբ, ապա այն դարձրեք առանձին նյութի թեմա: Հանրային դեմքի կողմից հրապարակային խտրական վարքը հասարակական քննարկումների տեսակետից կարևոր է:

# Օժանդակ գրականության ցանկ


1. Ձեռնարկ Հայաստանի եզդիաբնակ համայնքներում ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համար. մշակույթ, իրավունք, օրենսդրություն, «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն», 2020 թ.,
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
3. «ՄԱԿ»-ի հռչակագիրը ազգային , կրոնական լեզվական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին
4. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
5. Հայաստանի մասին 5-րդ կարծիք, Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե
6. ՈՒՂԵՑՈՒՅՑ Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսեւորումները բացառելու եւ հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ, Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների դիտորդ մարմին, 2017թ.,
7. The Tallinn Guidelines on National Minorities and the Media in the Digital Age & Explanatory Note, February 2019
8. European Charter for regional or minority languages
9. Framework Convention for the Protection of National Minorities
10. Educational Rights of Persons Belonging to National Minorities, DUNCAN WILSON, International Journal on Minority and Group Rights
11. ISSUE BRIEF: DISTINGUISHING DISINFORMATION FROM PROPAGANDA, MISINFORMATION AND “FAKE NEWS", Dean Jackson, 2017
12. Nicki Lisa Cole, Ph.D, Definition, Overview and Theories of Assimilation
13. Will Kymlicka, Multicultural Citizenship: A liberal theory of Minority rights, 07 April 2016

Yezidi Center for Human Rights

Freedom House

*Սույն զեկույցը պատրաստվել է **«Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի»** կողմից իրականացվող **«Հակազդելով ազգային փոքրամասնությունների մասին ապատեղեկատվությանն ու կեղծ տեղեկատվությանը»** ծրագրի շրջանակներում՝ «Freedom House» միջազգային իրավապաշտպան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի մեջ արտահայտված մտքերը և զեկույցի հեղինակային իրավունքները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել «Freedom House»-ի տեսակետներին:*

# ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՂԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ

***Հեղինակներ՝***

***Մուրազ Շամոյան***
***Շուշանե Սաքունց***

***Խմբագիր՝ Մուրազ Շամոյան***

© «Մարդու Իրավունքների Եզդիական Կենտրոն» իրավապաշտպան ՀԿ, 2023թ.